

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԱՌԱՊԱՐԻ ԿԱՄ ԶՈՒԱՐԹՆՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ*

Դ.

Պետումները Զուարթնոց եկեղեցու աւերակներում եւ այլ
ընդ այլոյ գրոյցները:

Խաչիկ Հայր-սուրբը 1900 թուի յունիս ամսին սկսեց
պեղումն Զուարթնոց եկեղեցու աւերակներում: Որքան ա-
ռաջ էր գնում պեղումն, այնքան բազմանում էին այլ ընդ
այլոյ զրոյցներն ու առասպելները այդ եկեղեցու մասին, ո-
րոնք դժբաղդաբար արձագանք գտան Հայ և օտարագոր լը-
րագրերի ու օրագրերի մէջ էլ: Թիֆլիզի „Новое Обозрѣніе“
լրագրի 1901 թուականի 5670 համարում տպուած է „Рас-
копки древняго храма близъ ԾԿՄԻԱԶՅԻՆԱ“ վերնագրով մի յո-
դուած, ուր շփոթուել են պատմական դէպքերը, յատուկ
անունները, աշխարհագրական դիրքը և այլն, և այս խառնաշփո-
թութեան մէջ յօդուածագիրը տքնում է ցոյց տալ Ա. որ Վա-
ղարշապաար եղել է Խանգարած կամ Զուարթնոց եկեղեցու
շուրջը. Բ. որ երազմոյն և այլ աստուածների մեհեանք եղել է
Զուարթնոց եկեղեցու տեղը Վաղարշապատում, ուր տեղի է
ունեցել և Լուսաւորչի յայտնի տեսիլը և ուր, այսինքն երազ-
մոյն մեհեանի տեղում՝ ս. Լուսաւորչի կառուցած Վաղարշապա-
տի Վաթուղիկէն կամ ս. Էջմիածինն է Զուարթնոց եկեղեցին. Գ.
որ ս. Լուսաւորչի մասունքները ամփոփուած են Խանգարած եկե-
ղեցու չորս սաների տակ և Հ. Խաչիկը, սներից մէկը մինչև հիմքը
քանդելով՝ գտել է այնտեղ մի մասը. Դ. որ Խանգարած
եկեղեցին ծածկուած է եղել հողի թանձր շերտերի տակ և
Հ. Խաչիկը, մի միայն պատմական ցուցումները հիմք ունենա-
լով՝ պեղել և յայտնագործել է մի արդէն վաղուց, անհետա-
ցած և մոռացուած հնութիւն: Յաւ ի սիրտ պէտք է ասենք՝
որ այդ զրոյցները շարունակուած են կրկնուել լրագիրներում:

* Շար. «Արարատ», սեպտ. հոկտ. էջ. 876:

մինչև անգամ հեղինակաւոր անձինքներից—Кавказъ 1902. (№ 304):

Մշակի խմբագրութիւնը Новое Обозрѣніе-ի այս յօդուածի առիթով «Մամուլ» բաժնի մէջ մի ղիտողութեամբ համառօտակի ցոյց տուեց վերև յիշուած ենթադրութիւնների անհեթեթութիւնները և դատապարտեց շահասիրութեան համար հասարակութեանը մոլորեցնելու ձգտումն: Բարդուղիմէոս Արքեպիսկոպոս Նոր-դարի 1901 թուի 72 համարում Новое обозрѣніе-ի վարկումներն անհիմն համարելով՝ խոստանում է մի առանձին շարադրութեամբ արժանաւոր պատասխան տալ: Նորին Արքեպիսկոպոսը «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ» իւր երկասիրութեան Բ. հատորի յաւելուածի մէջ շօշափում է այս խնդիրը (եր. 165—174), իբրև ծանօթութիւն բուն զրքի ԻԲ. գլխի:

Ինչադրիւններից են առաջանում այս այլանդակ զրոյցները՝ այդ չէ մեզ հետաքրքրողը, որովհետև ի յարգանս Խաչիկ Հայրսուրբի պէտք է խոստովանենք, որ նա իւր ստորագրութեամբ ոչ մի յօդուած չէ հրատարակել վերև յիշուած ենթադրութիւնները հաստատող չենք էլ կարող տարածուած զրոյցներն ու առասպելները համարել զանազան մարդոց տպաւորութիւնների արտայայտութիւն: Ուրախութեամբ պէտք է ասենք, որ Խաչիկ Հայրսուրբը, իբրև ս. Էջմիածնի միաբան՝ ս. Էջմիածնի պատմական նշանակութիւնը դիւրահաւան ռամկի աչքին նսեմացնող զրոյցների մի մասը, որ իբր թէ Խանգարած եկեղեցին է ս. Լուսաւորչի հիմնարկած Կաթողիկէն, կամ Էջմիածինը՝ հերքեց հրապարակաւ (Մշակ, 1902 № 285): Նա զրոյցների միւս անհեթեթութիւններն էլ պէտք է հերքէ, բայց ոչ միայն մինչև այսօր չէ արել այդ, այլ «Եկեղեցի Հայաստանեայց» կրօնական ամսաթերթում իւր մի փոքրիկ յօդուածը ստորագրել է «Վանահայր Զուարթնոց Մայր եկեղեցւոյ» տիպոգրֆ:

Զուարթնոց եկեղեցին Մայր չէ կարող կոչուել, որովհետև Մայր եկեղեցի միայն ս. Էջմիածինն է, իբրև Աթոռ Հայաստանեայց եկեղեցւոյ, և իւր հարադատ վանահայրն ունի յանձին Վեհափառ Կաթողիկոսի: Զուարթնոց եկեղեցին մեր պատմիչներից ամենևին Մայր եկեղեցի չի կոչուել, և այդպէս կոչելու

էլ հիմք չըկայ: Խաչիկ Հայր-սուրբը չի կարող վանահայր կոչուել Զուարթնոց եկեղեցու, որ աւերակ է և հիմնովին կործանուած. աւերակի վերահսկող կոչումն թերևս յարմար գայ իրան, բայց վանահայր կոչումն՝ բնաւ երբէք, մանաւանդ որ ինքը՝ Խաչիկ Հայր-սուրբը, Էջմիածնի միաբան է և միաբաններէ շարքում բնակարան ունի ու հանդերձագին է ստանում: Մեզ թւում է, թէ Խաչիկ Հայր-սուրբը ոգևորութեան ըսպէին անխորհրդաբար է վարուել, ստորագրելով «Վահայր Զուարթնոց Մայր եկեղեցոյ»:

Ա.

Վաղարշապատը եղել է իւր այժմեան տեղում եւ ոչ
Զուարթնոց եկեղեցու շուրջը.

(Զուարթնոց եկեղեցու տեղը եւ նրա կառուցման
ժամանակը:)

Վաղարշապատի ճիշդ տեղադրութիւնը և նրա կենտրոնում եղող ս. Էջմիածնի տեղը ստուգուած է Ազաթանդեղոսով (տպուած Կ. Պոլիս 1822 թուին):

Վաղարշապատը կենտրոն ընդունելով՝ Ազաթանդեղոսը ասում է, որ Հնձանքը (այժմեան ս. Շողակաթի վանքից դէպ արեւմուտք փոքրիկ եկեղեցու մնացորդը) քաղաքի Արեգ դռնից դուրս՝ արեւելեան կողմն էր գտնուում, իսկ ս. Հռիփսիմէ կոյսը նոյն Արեգ դռնից դուրս գալով և դէպի հիւսիս ուղղուելով՝ Արտաշատի ձանսպարհին մօտ, մի սարաւանդակ բարձրաւանդակ տեղում աղօթելիս՝ նահատակուեց (եր. 66—73): Ուրեմն, թէ Հնձանքը և թէ ս. Հռիփսիմէի նահատակութեան տեղը Վաղարշապատի պարսպից և Արեգ դռնից դուրս՝ քաղաքի արեւելեան կողմն էին գտնուում, իսկ Վաղարշապատը Հնձանքից և ս. Հռիփսիմէի նահատակութեան տեղից դէպի արեւմուտք էր, մինչդեռ Զուարթնոց եկեղեցին Հնձանքից էլ ս. Հռիփսիմէի նահատակութեան տեղից էլ չորս վերստաչափ հեռի՝ դէպի արեւելք է, Հնձանքի և ս. Հռիփսիմէի վանքի նկատմամբ Վաղարշապատի բոլորովին հակադիր կողմը: Որպէսզի հնարաւոր լինի ասել, թէ Վաղարշապատը Զուարթնոց եկե-

զեցու շուրջն էր, պէտք է Զուարթնոց եկեղեցին տեղափոխել
ս. Հռիփսիմէի և ս. Շողակաթի վանքերից դէպ արեւմուտք:

Ըստ Ագաթմանեանի՝ Վաղարշապատը շրջապատուած
էր պարկէն փոսով: Ս. Գայիանէ կուսին քաղաքի հարա-
ւային դռնից դուրս քաշ տալով՝ այն ճանապարհի վերայ, որ
տանում էր դէպի Մեծամօրի (Սև ջուր) կամուրջը, պարկէն
փոսի մօտ նահատակում են: Այդ տեղ է ս. Գայիանէի վանքը:
Ուրեմն քաղաքի հարաւային սահմանն էլ յայտնի է: Այդ
սահմանները ստուգում են կանգուն մնացած և ս. կոյսերի
անունով՝ նրանց նահատակութեան տեղը, կառուցուած
շէն վանքերը, իսկ թէ, յիշաւի, վանքերը շինուած են այն
տեղերում, ուր նահատակուած են ս. կոյսերը՝ հաւաստիա-
ցնում է Ագաթմանեանը: Նա ասում է (եր. 76), որ ս. Լու-
սաւորչը Խոր-Վիրապից դուրս գալուց յետոյ, ս. կոյսերի
նահատակութեան իններորդ օրը, նրանց մարմինները
առ ժամանակ մի ամփոփելով շնձանքում՝ վաթսո-
րեայ քարովութիւնից յետոյ հաւատացեալ թագաւորի և
ժողովրդի գործակցութեամբ թաղում է նրանց նահա-
տակութեան տեղերում, քաղաքից դուրս, և նրանց դե-
րեգմանների վերայ վկայարաններ շինում — մէկը քաղաքի
հիւսիս արևելեան կողմը, ուր նահատակուեց ս. Հռիփսիմէն
երեսուն երկու ընկերներով, մէկը Արեգ դռնից դուրս՝ այգու
մէջ, շնձանքի տեղը, որ ս. կոյսերի օթեանն էր, և մէկն էլ
հարաւային կողմը, ուր ս. Գայիանէն երկու ընկերներով նա-
հատակուեց (եր. 279): Այսպէս ուրեմն Վաղարշապատն
ընկնում է շնձանքից և ս. Հռիփսիմէի վկայարանից դէպ
հարաւարեւմուտք և ս. Գայիանէի վկայարանից դէպի հիւսիս
ձիշգ այն տեղը, ուր այժմ կայ:

Այս բոլոր վկայարաններն էլ այժմ շէն են և յաւիտե-
նական արձան Վաղարշապատի արևելեան և հարաւային
սահմաններին. իսկ Մայր Աթոռի կամ, ինչպէս հնումն էր
կոչւում, Կաթողիկէի տեղը քաղաքի կենտրոնումն էր, արքունի
ապարանքին մօտ, այնտեղ, ուր տեղի ունեցաւ ս. Լուսաւորչի
յայտնի տեսիլքը (Ագաթ. 272 երես):

Ինչպէս տեսանք, Զուարթնոց եկեղեցին ա. Ագաթման-

գեղոսի ցոյց տուած Վաղարշապատի արևելեան սահմանից, Արեգ դանից, դեռ էլի չորս վերստ հեռաւորութեամբ գէպի արևելք է գտնուում, ուրեմն չէ կարող Վաղարշապատի կենտրոնում լինել. բ. չը լինելով Վաղարշապատի կենտրոնում, չի էլ կարող լինել ու Նուսաւորչի յայտնի տեսիլքի տեղը. հեռաւորութեամբ է չէ այն եկեղեցին, որ ու Նուսաւորչի շինեց իւր տեսիլքի տեղը, արքունի ապարանքին մօտ, որ կոչուում էր Կաթուղիկէ, իսկ այժմ կոչուում է Էջմիածին. և գ. Զուարթնոց եկեղեցին քաղաքամիջից, այսինքն ու Էջմիածնից, չորս վերստ հեռու է դար յետոյ շինուած է Առապարում, որ նշանակում է անմարդաբնակ, բուսականութիւնից զուրկ, աւաղոտ և անջրդի տեղ (Սեբ. եր. 118—119): Հէնց այսօր էլ Զուարթնոց եկեղեցու աւերակները գտնուում են մի այգւիսի սարաւանդակի վերայ: Այդ տեղը անշէն, անմարդաբնակ է եղել մինչև Ներսէս Գ: Որպէս զի կարելի լինի հնարել այնպիսի առասպել, թէ Վաղարշապատը Զուարթնոց եկեղեցու շուրջն և Զուարթնոց եկեղեցին էլ Էջմիածինն է, պէտք է նախ և առաջ Հնձանքն ու ու Հռիփսիմէի շէն վկայարանը տեղափոխել Զուարթնոց եկեղեցու արևմտեան կողմից նրա հիւսիս—արևելեան կողմը, Փարաքար գիւղի մօտ, որովհետև այդ անկարելի է, ուստի և Խաչիկ Հայր-սուրբը խոհականութիւն ունեցաւ Մշակի 1902 թ. 285 համարում տպել հետևեալը. «Էջմիածին, դեկտեմբերի 20-ին. «Որովհետև վերջերս Կովկասի զանազան թերթերում լոյս տեսած թղթակցութիւնների մէջ ինձ վերագրեցին, որ ես իրր թէ իմ գտած եկեղեցիների աւերակներն եմ ընդունում և հրատարակում որպէս ու Էջմիածին, ուստի սրտնով պատիւ ունիմ հրապարակով յայտնելու, որ յիշեալ կարծիքը անհեթեթութիւն է և հնարովի որպիսին ես երբեք ինձ թոյլ չեմ տուել և հիմք էլ չունէի թոյլ տալու»:

«Խնդրում եմ բոլոր խմբագրութիւններից արտատպել սոյն երկտող հերքումն ի միամտութիւն ընթերցողների»:

Հերքումն թէև առաջգական է, բայց այնուամենայնիւ կարելի է եղբակացնել, թէ ինքն Հ. Խաչիկը չէ թելադրողը, որ Խանդարած եկեղեցին են համարում ու Էջմիածին: Այսպիսի

սով, օրհնեալ է Աստուած, Վաղարշապատն էլ, Կաթողիկէն կամ ս. Էջմիածինն էլ, ս. կոյսերի վկայարաններն էլ մնում են իրանց յաւիտենական տեղում, իրանց մեծակառոյց շինութեամբ և երկնաբերձ գմբէթներով: Դրանք մեր պատմիչներից կոչւում էին եկեղեցիք Վաղարշապատայ:

Յայտնի է պատմութիւնից, որ Զուարթնոց եկեղեցու տեղը անմարդաբնակ առապար էր, և Ներսէս Գ. ը է. դարում առաջին անգամ ջուր բերեց ու շէնցրեց այդ վայրը: Այս բանը վկայում է Ներսէս Գ. Շինողի ժամանակակից Սերեոս եպիսկոպոսը իւր «Ի Հերակլն» պատմութեան մէջ: Ահա նրա խօսքերը. «Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթողիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ ս. եկեղեցեացն՝ որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին՝ յորումս ասեն, ընդ առաջ եղև թագաւորն Տրդատ Արբոյն Գրիգորի: Շինեաց անդ եկեղեցի մի յանուն երկնաւոր զուարթնոց, որոց երևեալ ի տեսեան Արբոյն Գրիգորի երկնաւոր զաւրացն. և շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեալք, արժանի աստուածային պատուոյն՝ որում նուիրեացն: Ած ջուր և երեւ զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս և ծառատունկս և շուրջանակի պատուարեաց զբնակութեամբ գեղեցկազիր յաւրինուածով, բարձր պարսպաւ, ի փառս Աստուծոյ» (Սեբ. Տրատ. Գ. Պատկանեան 1879 թ. եր. 118—119):

Այս հատուածից երևում է, որ Ներսէս Գ. շինում է եկեղեցին ոչ թէ Վաղարշապատում, այլ ճանապարհի վերայ, այնտեղ՝ ուր Տրդատը ընդ առաջ էր գնացել Արտաշատի Վիրապից ելած և Վաղարշապատ վերադարձող ս. Գրիգորին. ընդառաջումն, ինչպէս յայտնի է Ագաթանգեղոսից, եղել է քաղաքի պարսպից դուրս. բ. Ներսէս Շինողը կառուցանում է եկեղեցին՝ Վաղարշապատում արդէն գոյութիւն ունեցող եկեղեցիներին մերձ բնակութիւն ունենալու համար. ուրեմն Վաղարշապատն ու իւր եկեղեցիքն, որք են՝ Կաթողիկէն, քաղաքի կենտրոնում արքունի ասարանքին մօտ, և ս. կոյսերի վկայարանները, քաղաքի պարսպից դուրս (ըստ Ագաթանգեղոսի), արդէն առա-

Զուց կային. գ. Ներսէս Գ. շինում է եկեղեցին ոչ թէ տես-
լեան տեղը, այլ Տրդատի ընդառաջ ելած տեղը, միայն՝ ի
պատիւ տեսիլքի մէջ երեցած երկնաւոր զօրքերի, կոչելով
Զուարթնոց եկեղեցի: Զուարթնոց կոչումն ապացոյց է, թէ
ս. Գրիգոր այնտեղ տեսած լինի երկնաւոր զօրաց բազմու-
թիւն, ինչպէս Դուինի եկեղեցու ս. Գրիգոր կոչուելը ապա-
ցոյց է, թէ ս. Գրիգոր Լուսաւորիչը այնտեղ եղած, որ և է
գործ կատարած, կամ նահատակուած լինի:—Տազանրօգում
ս. Յակովբ Մծբնայ հայրապետի անունով Հայոց եկեղեցի է
կառուցւում, դրանից չի կարելի հետեցնել՝ թէ ս. Յակովբ
հայրապետը Տազանրօգում եղել կամ այնտեղ նահատա-
կուել է:—Դ. Եթէ Զուարթնոց եկեղեցու շուրջը բնակութիւն
եղած լինէր երբ և իցէ, անշուշտ, մարդկային քաղաքակր-
թութեան հետքեր մնացած կը լինէին: Բայց պատմութիւ-
նից երևում է, որ Ներսէս Գ. գետից նոր է ջուր բերում և
քոլոր առապար վայրը մշակում, այդի և ծառաստան տնկում:
ուրեմն առաջ տեղը անշէն և անմարդաբնակ է եղել, զուրկ
բուսականութիւնից:

Զուարթնոց եկեղեցին կառուցանող Ներսէս Գ. հայ-
րապետական իշխանութիւն վարում էր 640 — 661
թուականը (Պ. Եղեան, 1887 թ. հրատ. Ղևոնդ պատմ.
Ծանօթութիւն 14): Յունաց Կոստանդին կայսրին հաճոյա-
նալու համար 648 թուին Ներսէսը հաղորդուելով յունածէս
պատարագին՝ ատելի եղաւ Հայոց, պարտաւորուեց հեռանալ
Դուինի հայրապետանոցից դէպի Կ. Պօլիս և, այնտեղից յետ
դառնալիս՝ դադար առաւ իւր հայրենի Տայք գաւառում: զի
իշխանն Ռշտունեաց և այլ իշխանքն որ ընդ նմա անհնա-
րին ցասմամբ փքացեալ էին ի վերայ նորա (Սեբեոս եր.
143): Ներսէսը, Թէոդորոս Ռշտունու մահից յետոյ, 654
թուին, վեցամեայ բացակայութիւնից վերադառնալով հայրա-
պետական աթոռը՝ շարունակեց իւր ընդհատուած իշխանու-
թիւնն ու եկեղեցու շինութեան գործը:

Պ. Բասմաճեանն էլ (Բանասէր հատ. գ. պրակ ա. 1901
թուի, եր. 33—34) Ներսէսի հայրապետութիւնը դնում է
641—661 թուին և շեշտում է Ներսէսի յունամոլութիւ-

նր, ահա, «Տափաւին արձանագրութեան մասին չըխօսած կարժէ որ քանի մը տողերով անցողակի յայտնեմ թէ Զուարթնոց կամ Առապարի ս. Գրիգոր եկեղեցին կառուցուած է հրամանով Ներսէս Գ. «Շինող» կաթողիկոսի (641—661): Եւ իրօք գտնուած խոյեակներէ ոմանց վրայ յունարէն տառերով գրուած է «Ներսիսի» և «կաթողիկոսի» մենագրութիւնները, որ կը յայտնեն Ներսիսի յունասիրութիւնը, իսկ ժ. գաւառ ժամանակագիր Սամուէլ Անեցին կը գրէ թէ 654 թուին հաստատուած է այս եկեղեցին.—ՈՅԴ. Հայրապետն Ներսէս շինէ զսուրբ Գրիգոր զգարմացուցիչն տեսողաց»:

Ըստ Սեբեոսի՝ Զուարթնոց եկեղեցու հիմնարկութիւնն ու կառուցումն տեղի է ունեցել նախ քան Ներսէսի գժտուելը Թէոդորոս Ռշտունու հետ ու աքսորուելը (Սեբեոս եր. 118—119), ուրեմն իւր հայրապետութեան առաջին տարիներում, այսինքն 640—648 թ.: Սամուէլ Անեցու առաջ բերած թիւը վերաբերում է Ներսէսի՝ աքսորից վերադառնալուց յետոյ, եկեղեցու թերին լրացնելուն, որի համար Սեբեոս ասում է (եր. 150—151). «Փութայր կատարել զշինուած եկեղեցւոյն, զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի»: Եւ արդարեւ, Ներսէսի աքսորը ընդունելով 648 թուին, վեցամեայ տաւազրութիւնից յետոյ վերադարձը ընկնում է 654 թուին, երբ արդէն վերջացնում է իւրակառոյց եկեղեցու շինուածքն ամբողջապէս:

Տեսնենք այժմ, թէ Վաղարշապատու կաթողիկէն և կոյսերի վկայարանները մինչև Զուարթնոց եկեղեցու հիմնարկութիւնը որպիսի դրութեան մէջ էին և քանի անգամ էին վերանորոգուել: Պատմութիւնից յայտնի է, որ հայերս աղղովին քրիստոնեայ դարձանք 301 թուին: Կոյսերի վկայարանների և Վաղարշապատու ս. կաթողիկէի կառուցումն, որ մեր դարձի հետ սերտ կապ ունի, ըստ Ագաթանգեղոսի՝ 303 թուից յետոյ պէտք է որ չըլինի: Սեբեոսի պատմութիւնից գիտենք (եր. 88-89), որ ս. Լուսաւորչի ու Տրդատի շինած ս. Հռիփսիմէի վանքը վերանորոգուել է Ե. դարի սկզբին՝ ս. Սահակ պարթևի օրով, և վերաշինուել ու ընդարձակուել է Կումիտաս կաթողիկոսի ձեռքով (617—

625 թ.): Նոյն Կոմիտասը, ըստ Սեբեոսի, վերանորոգել է ս. Կաթուղիկէն (Եջմիածինը), կարկատելով որմերի խրամատները, փայտայարկ տանիքը փոխել է քարայարիկ և շինել է սարայատակը: Շահաթունեան կարծում է (Ստոր. ա. հատ. եր. 18), որ Մեհրուժանը 380 թուին աւերել էր Վաղարշապատայ Կաթուղիկէն էլ, որը Պապի Թագաւորելուց յետոյ նորոգեցին Վահան Մամիկոնեանի նախնիքը. այս առաջին նորոգութիւնն է. երկրորդ նորոգութիւնը եղել է Վահան Մամիկոնեանի ձեռքով, Վարդանանց պատերազմի աւերմունքից յետոյ, Ե. դարի երկրորդ կէսին, 483 թ. (Վաղար Փարպեցի 22. Սեբեոս զլ. ա. եր. 25. Ասողիկ ր. հանդէս, եր. 81-82), երրորդ նորոգութիւնը՝ արդէն Կոմիտասի օրով 618 թ. էր. նոյն ինքն Ներսէս Գ. ևս նորոգութիւններ է արել Կաթուղիկէում, որ համարելի է չորրորդ նորոգութիւն: Եզր կաթուղիկոսը (630 թ.) վերաշինում է ս. Գայիանէի վկայարանը (Շահաթունեան հատ. ա. եր. 237):

Արդ, երբ Ներսէսի մերձաւոր նախորդները եռանդով նորոգում ու վերաշինում էին Վաղարշապատի Կաթուղիկէն ու ս. կոյսերի վկայարանները, Ներսէս Նինոյը փոխանակ արդէն վերաշինուած ու նորոգուած Կաթուղիկէում բնակութիւն հաստատելու, Կաթուղիկէից չորս վերստ հեռու, մի առապարտելում հոյակապ եկեղեցի է կառուցանում, բնակարան հաստատում, որ Վաղարշապատի եկեղեցիների մօտ լինի: Մի պատճառ, որ շատ թոյլ է և Յովհաննէս պատմաբանից շատ լաւ բնորոշուել է՝ «եղեցիկ իմն մոլութիւն» կոչուելով: Եւ այս թոյլ պատճառով կառուցուած եկեղեցին մի անգամ այրուելով ամայանալուց յետոյ էլ չըվերաշինուեց:

Այս ամենից երևում է, որ Զուարթնոց եկեղեցու հիմնարկութիւնից շատ առաջ Վաղարշապատի եկեղեցիքը կային և երեք-չորս անգամ նորոգուել էին: Ընդունելով Վաղարշապատի եկեղեցիների շինութիւնը 303 թուին, իսկ Զուարթնոց եկեղեցունը 641—648 թ. ուրեմն Վաղարշապատի եկեղեցիքը Զուարթնոց եկեղեցուց մօտ 340 տարի առաջ են, և այդքան ժամանակ էլ առաջ, այսինքն ս. Լուսաւորչի օրից սկսած, յայտնի էին Կաթուղիկէն՝ շինուած Վաղարշապատի

կենտրոնում Արքունի ապարանքին մօտ, ս. Լուսաւորչի տեւ-
լեան տեղը, վկայարանները՝ շինուած Վաղարշապատի արե-
ւելեան և հարաւային պարսպից դուրս, ս. կոյսերի նահա-
տակութեան տեղը: Անհնարին է յեղաշրջել իրողութիւնը,
երբ մանաւանդ նրան հաւաստիացնող յիշատակարանները
կանգուն են:

Բ.

Զուարթնոց եկեղեցին Երազմոյն և այլ աստուածների
մեհեանը չէ եղել, և այդ մեհեանը քրիստոնէական
սանարի չէ փոխուել ի դէմս Զուարթնոց եկեղեցու.

Ըստ մեզ՝ Երազմոյն մեհեանը Վաղարշապատից հեռու,
Արտաշատի մօտ պէտք է լինի, եթէ չասենք Արտաշատի մէջ-
ուրեմն ոչ մի առնչութիւն չըկայ Երազմոյն մեհեանի, Վա-
ղարշապատի արքունի ապարանքի (որի մօտ տեղի ունեցաւ
ս. Լուսաւորչի յայտնի տեսիլքը) և ս. Էջմիածնի մէջ: Ազա-
թանդեղոս ասում է, որ Տրդատը Վաղարշապատում նահա-
տակուած կոյսերի վերայ, նրանց նահատակուած տեղը, երեք
վկայարաններ շինելուց և ս. Լուսաւորչի տեսիլքի տեղը
որոմնափակ անելուց յետոյ՝ ս. Լուսաւորչի հետ զնում է
Արտաշատ քաղաքը, այնտեղ եղած Անահտի քաղինը, որ
Երազմոյն էր կոչուում, քանդելու համար: Ճանապարհի վե-
րայ (երևի քաղաք մտնելիս) առաջին պատահած Երազմոյն,
Երազմոյնի մեհեանն է քանդում, որից դեբը հեծելազօրքի
կերպարանքով Անահտի բաղինն են ապաւինում: (Ազաթ. եր.
282—287):

Ըստ Ազաթանդեղոսի՝ Երազմոյն մեհեանը նոյն Անահտի
բաղինն է, որ Արտաշատումն էր. իսկ Երազմոյն, Երազմոյնի
մեհեանը եթէ նոյն Երազմոյն մեհեանը չէ, այնու ամե-
նայնիւ աւելի Արտաշատին էր մօտ քան Վաղարշապատին.
որովհետև դեբը այնտեղից դուրս գալով մօտակայ Անահտի
բաղինն են ապաւինում: Բաց յայտմանէ, եթէ Երազմոյն
մեհեանը Վաղարշապատի մէջ տեղում լինէր, էլ ի՞նչ հարկ
կար Ազաթանդեղոսին ասելու, թէ Տրդատը ս. Լուսաւորչի

հետ դնաց Արտաշատ, այնտեղ Անահտի մեհեանը քանդելու և ճանապարհին նախ—դիպելալ՝ քանդեցին Երազմոյն մեհեանը. այլ կասէր. Տրդատ և ս. Լուսաւորիչ քանդեցին Վաղարշապատի մէջ՝ ապարանքին մօտ եղած, Երազմոյն մեհեանը և ապա դնացին Արտաշատ: Ապարանքին մօտ, ուր տեղի ունեցաւ Կաթուղիկէն կերպարանող լուսոյ կամարների տեսիլքը՝ Երազմոյն մեհեանի անուն յիշատակուած չըկայ, որովհետեւ Երազմոյն մեհեանը Արտաշատին մօտ էր, և Զուարթնոց եկեղեցու տեղը քաղաքից չորս վերստ հեռաւորութեամբ գէպի արևելք առապար անապատում գտնուելով չէր կարող Լուսաւորչի յայտնի տեսիլքի տեղը լինել. ուրեմն բոլորովին մտացածին և անհեթեթութիւն է հաւատալն ու հաւատացնելը, թէ Խանգարած եկեղեցին Երազմոյն մեհեանն է, ս. Լուսաւորչի ձեռքով, իւր տեսիլքի համեմատ, քրիստոնէական տաճարի վերածուած՝ քահանայապետութեան Աթոռ և Հայոց բոլոր Մայր եկեղեցիների լինելու համար:

Զուարթնոց եկեղեցու տեղը Երազմոյն մեհեանը լինելուն իբրեւ ապացոյց համարում են Զուարթնոց եկեղեցու աւերակներում գտնուած սեպագիր արձանագրութիւնը:

Զուարթնոց եկեղեցու աւերակների պեղման ժամանակ, յիրաւի, գտնուել է այնտեղ հիւսիսային դրան մօտ 47 տողից բաղկացած սեպագիր մի արձանագրութիւն, որ կոթողի ձև ունի: Հ. Խաչիկը (1900 թ. Սօսսոս-Սեպտ. Արարատում, երես 381) այսպէս է նկարագրում այդ կոթող արձանագրութիւնը. «Քարը՝ որձաքար, մեծութիւնը-երկայնութիւնը 3 արշ. 14 վերշոկ, լայնութիւնը 14 վերշոկ, հաստութիւնը 8 վերշոկ. 23-24 տողերի մէջ տեղից կոտրուած:»

Մինչև այսօր սեպագիր արձանագրութիւններ գտնուել են փորագրուած կամ ժայռերի և կամ պարիսպների շարքի քառանկիւնի քարերի վերայ. գտնուել է և սանդաձև փորուած մի քարի շրթան շուրջը պատող մի արձանագրութիւն. բայց ոչ երբէք այն դիրքով, ինչպէս գտնուել է Զուարթնոց եկեղեցում: Այդ կոթողը, որ իւր նախկին տեղում խաչքարի պէս իւր պատուանդանի վերայ կանգնած պէտք է լինէր, Զուարթնոց եկեղեցում որպէս հասարակ քար դրուած է եղել հիւսիսային

դրան վերայ՝ իբրև բարաւոր, երեսն ի վայր. ապացոյց — կոթողի երկու ծայրերի վերայ մնացած կրազանգի հետքը:

Այս սեպաձև արձանագրի պատուանդանը չի գտնուել եկեղեցում, կամ նրա շուրջը՝ որպէս զի հնար լինի ասել, թէ արձանագրութիւնը կապ ունի եկեղեցու տեղի հետ: Պ. Բասմաճեանը ասում է. «Հակառակ բոլոր ջանքերուս և խուզարկութիւններուս՝ կարելի չեղաւ գտնել կոթողի պատուանդանը...: Բայց կարող եմ քայքայեալ կերպով յայտնել թէ կոթողը տարուած է հոն Կուտուրլի գաւառէն, եթէ նոյն իսկ այնտեղ չէ այս անձանօթ գաւառի տեղը» (Բանասէր հատ. երրորդ, պրակ ա. եր. 34): Սեպագիր արձանագրութիւնը վերծանող պ. Բասմաճեանը գրում է. «Այս արձանագրութեան մէջ յիշուած երկիրը — Կուտուրլի — կարծիքով պէտք է լինի Մասիսի ստորոտում լեռնային Խութուրլու գիւղը և Իլդարունի գետը պէտք է լինի Սև ջուր»... (Արարատ, Ապրիլ 1901 թ. եր. 225—226):

Պ. Բասմաճեանի ենթադրած Մասիսի ստորոտի Կուտուրլի — Խութուրլու գիւղը և Իլդարունի կամ Սև ջուր գետը Երասխի աջ կողմումն են: Սուրմալուի գաւառում, Զուարթնոց եկեղեցին Երասխի ձախ կողմում՝ Էջմիածնի գաւառում, առաջինքը՝ հին Մասեացոան, և երկրորդը Արագածոան գաւառներում, ուղիղ գծով իրարից մօտ 40 վերստ հեռի, մէկը Երասխից հարաւ, միւսը՝ Երասխից հիւսիս:

Յովսէփ վ. Սանտալճեան Բաղմալէպի մէջ (Յունվար 1901 թ.) այդ սեպագիր արձանագրութեան հետ իւր վերլուծութիւնը դնելով՝ Պ. Բասմաճեանի «Կուտուրլու»-ն «Քուիրդա» է կարգում (տող 6), իսկ Իլդարունի-ն «Փանանիասու»: Ինչ որ պ. Բասմաճեանը դեռի անուն է համարում, Յ. վ. Սանտալճեանը «Փանանիասու» ծանօթութեան մէջ «արքայիկ մը» է կոչում: Պ. Բասմաճեանը «Կուտուրլին» որպէս վայր և Իլդարունին որպէս գետ ենթադրում է Երասխի աջ կողմը, Մասիսի ստորոտում, իսկ Յ. վ. Սանտալճեանը ենթադրում է, որ Քուիրդա-ն Փեղամայ ծովի հարաւարեւմտեան կողմն է, և եզրակացնում է. «Թերևս Կոտայք գաւառին նախնաւոր անունն Քուիրդա էր»:

Ի դէպ ասենք, երկու սեպագրագէտների ընթերցուածներն իրար համեմատելով՝ տեսնում ենք որ միայն առաջին չորս տողերն են նման. այնուհետեւ թէ՛ ընթերցմունքը և թէ՛ թարգմանութիւնները տարբերւում են, պահելով միայն բովանդակութեան ընդհանուր իմաստը: Երկու սեպագրագէտների ընթերցմունքից և թարգմանութիւններից ո՞րն է ուղիղ և ո՞րը սխալ՝ մենք ձեռնհաս չենք դատելու, բայց հակամետ ենք ընդունելու, որ սեպագիր արձանագրութեան սկզբնական տեղը Զուարթնոց եկեղեցին չէ. այդ սեպագիր կոթողը ուրիշ տեղից է բերուել ու Զուարթնոց եկեղեցում դրուել: Այդ ուրիշ տեղը ո՞ւր է՝ Սասնի՞ ստորոտում, թէ Գեղամայ լեռների հարաւային արեւմտեան լանջերի՞ն, այդ խնդիրը թող լուծեն բեւեռագրագէտները:

Հայ բանասերներից ու հնախօսներից ոմանք առհասարակ ձգտում են առնչութիւն տեսնել հին և նոր անունների մէջ. մեր կարծիքն է՝ չըհրապուրուել. հին և նոր անունների պատահական նմանութիւնը երբեք հիմք չէ կարող ծառայել նոյնացնելու նոյն անունները խնդրելի առարկայի նկատմամբ: Քուիրդան, որ կարող էր դոյութիւն ունենալ Քրիստոսից առաջ Բ. դարում, կարելի է ոչ մի առնչութիւն չունի Կոտայքի հետ, և ոչ Կուտուրլին այժմեան Խութուրլիի հետ:

Պ. Բասմաճեանը «Բանասերի» յիշուած տետրակի մէջ, խօսելով Զուարթնոց եկեղեցու աւերակներում գտնուած սեպագիր կոթողի երեւալու մասին՝ գրում է. «Անկէ յետոյ բոլոր թերթերն հրատարակեցին այս լուրը, զանազան տեղեկութիւններ տուին պեղումներու վերայ, և մինչև իսկ չափազանցեցին ամեն բան ու կամոյական—չասեմ՝ երեւիայական—մեկնութիւններ տուին գտնուած բեւեռագրի մասին: Եւ այսօր չը պիտի զբաղիմ՝ այն հարցերով թէ իրօք գտնուած են ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարները Զուարթնոց եկեղեցոյ հիմերուն տակէն և թէ այնտեղ եղած է նախկին Եջմիածինը և կամ՝ Ագաթանգեղոսի (ՃԼ) Երազացոյց երազնդհան պաշտաման Տիւր դից դպրի մեհեանը: Այս հարցերու մասին պիտի գրեմ «Բանասերի» յաջորդ պրակներէն միոյն մէջ»:

—Մենք չը գիտենք՝ պ. Բասմաճեանը կատարեց իւր խոստումը թէ ոչ ոք որովհետեւ Բանասերի յաջորդ պրակները ձեռքի տակ չունինք. բայց սոյն ընդօրինակութիւնից ևս յայտնի երևում է, որ նա կասկածով է վերաբերւում և տարածուած ու հրատակուածները չափազանցեցրած, կամայական և երևակայական մեկնութիւններ է համարում:

Գեր. Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսը զանազան տեղերից աասնեակ սեպագիր արձանագարեր է բերել ս. Էջմիածին: Այդ քարերը ս. Էջմիածնում տեսնելով՝ ինչպէս չենք կարող ասել, թէ դրանք հէնց իրանց սկզբնաւորութեան առաջին օրից Էջմիածնումն են դրուել, և ինչպէս անհնարին է ս. Էջմիածնին վերագրել արձանագրութիւնների մէջ յիշուած դէպքերը, այսպէս և չենք կարող ասել, թէ Զուարթնոց եկեղեցու մօտ գտնուած սեպագիր արձանագրութիւնը սկզբում այնտեղ է կանգնած եղել և այդ տեղը որ և է առընչութիւն ունի մեր հեթանոսական ժամանակի Տիւր դից, Երազմոյն, Երազմոյհայն և Երազմոյց չաստուածների մեհեանների հետ, որովհետեւ այդ չաստուածների մասին արձանագրութեան մէջ յիշատակութիւն չըկայ և, ինչպէս ապացուցուեց, Խանդարած կամ Զուարթնոց եկեղեցում գտնուած սեպագիր արձանագրութիւնը ուրիշ տեղից է բերուել այնտեղ:

Գ.

Զուարթնոց եկեղեցու սիւների տակ չէր կարող դրուել
Ս. Լուսաւորչի մարմինը եւ չէ դրուել:

Խաչիկ Հայր-սուրբը հիմք ունենալով Ղրասխանակերտցի Յովհաննէս կաթ. պատմաբանի աւանդածը, սկսեց Զուարթնոց եկեղեցու չորս հաստահեղոյս սիւններից մէկը քանդել մինչև հիմքը՝ ս. Լուսաւորչի մարմնի մասն այնտեղ գտնելու նպատակով: Քանի անգամ առիթ ունեցանք ասելու, որ նա զուր աշխատանք գործ չըդնի, որովհետեւ սիւնների հիմքի տակ ս. Լուսաւորչի մարմինը չըկայ: Սակայն Խաչիկ Հայր-սուրբը յամառութեամբ շարունակում էր իւր գործը, կրկնելով. «Հնասեր»

ներին հեաքըբրութեան բաւական նիւթ տալուց յետոյ կամենում եմ հաւատացեալներին էլ պաշտամունքի առարկայ տալ: Սիւնը փորուեց մինչև հիմքը. սակայն չըգտնուեց այնտեղ ս. Լուսաւորչի նշխարն ամփոփող և նրա նուիրակա՜նութեան պատշաճ մի տապանակ քարից կամ մետաղից. յետոյ լուր տարածուեց, որ հողի մէջ ոսկրներ են գտնուած. ուրիշների հետ Մայր Աթոռիս միաբան ծերունադարդ Եղիա վարդապետ Հասան Զալալեանն էլ, որի ուղղամտութեան, կրօնասիրութեան և անաչառութեան մասին ոչ ոք կարող է կասկածել, գնում է քանդուած սիւնի հիմքը տեսնելու, և տեսնում է հիմքում մանրամաղ աւազախառն հող. նա քրքրել է տալիս այդ հողը և այնտեղից դուրս է դալիս ոսկրների հետ և թռչունի կմախք:

Ահագին սիւնի տակ մայր գետինը ինչո՞ւ պէտք է մաղած հող լինի, եթէ նոր լցրած չէր. և Հ. Եղիան, իրան յատուկ պարզախօսութեամբ, ասում է. «Եթէ հողը նոր լցուած չէ և ոսկրները նոր դրուած չեն հողի մէջ՝ թռչունի կմախքն ի՞նչ գործ ունի այստեղ»: Խաչիկ Հայրսուրբը այլայլում է, բայց և պատասխանում. «Դրանք էլ ս. Լուսաւորչի արծուի ոսկերոտիքն են»: Թռչունի ոսկրներից մի կտոր վեր է առնում Հ. Եղիան, իսկ գլուխը պահում է Հ. Խաչիկը:

Մենք միայն Հ. Եղիայի անունն ենք տալիս. որովհետև ուրիշների տեսածն ու նկատածը անձամբ չենք լսել, հետեւաբար և իրաւունք չենք համարում նրանց անունները տալ: Յանկալի էր, որ ուրիշներն էլ իրանց տեսածը հրատարակեն՝ որով և ճշմարտութիւնը վերականգնած կրլինին:

Մենք, ի նկատի ունենալով Հ. Խաչիկի կոչումն՝ յանցանք կը համարենք կարծելն անգամ, թէ նա ուրիշ տեղից ոսկրներ բերած ու լցրած լինի սեան հիմքի խորութեան մէջ. եթէ ենթադրենք, թէ նա արել է այդ բանը, գոնեա այնքան հեռատես կրլինէր, որ թռչունի ոսկրները կը ջոկէր նախապէս և միայն մարդկային ոսկրներ կը դնէր: Ուստի և հակառակ էնք կարծել ու հաստատ համոզուած ենք, որ մի նենգաւոր և չարածձի մարդ, տեսնելով Հ. Խաչիկի անդուսդ ցանկութիւնը

գտնելու և, Վուսաւորչի մասունքը սիւնի հիմքում խաղ է խաղացել նրա գլխին՝ հիմքի տակ մաղած հող լցնելով և հետն էլ մարդու ու թռչունի ոսկրների որ լաւ ևս ծաղրէ նրան: Անշուշտ, հաղարաւոր տարիների ընթացքում ահադին մեծութեան սիւնի և նրա վերայ ծանրացող մեծամարմին եկեղեցու տանիքի ու գմբէթի ճնշման տակ գետինը փուխը չէր մնայ՝ տոբորուած լինելով նաեւ շինութեան ժամանակ սուղուած կրախառն ջրով: Յիրաւի, հաստահեղոյս սիւնի հիմքում ինչպէս կարող է մանրամաղ փուխը փոշի լինել, ո՞վ աւաղի վերայ հիմք կը դնէ: Ս. Վուսաւորչի մարմինը առանց կարեւոր նախահոգութեան հէնց հողի մէջ շաղ տրուած կարող էր լինել. ս. Վուսաւորչի ոսկրների հետ թըռչունի ոսկրներ ինչո՞ւ կը լինէին. ս. Վուսաւորչի ինչ արծիւ կարող էր ունենալ: Անշուշտ խաղ է խաղացուած, անյայտ չարագործը մեծ սրբապղծութիւն է կատարել: Մենք իջել ենք սիւնի բացուած հիմքի խորութեան մէջ. հողը թաց կոչուելու չափ խոնաւ է. այդ թացութեան և խոնաւութեան մէջ չէին կարող 1260 տարի առանց կարեւոր նախահոգութեան ոսկրներ դիմանալ: Եթէ ընդունենք, որ սրբոց մասունքներին ապականութիւն չէ մերձենում թռչունի ոսկրներն էլ սրբի մասունք հօ չէին, որ նրանք էլ չըփաէին: — Ի յարգանս Խաչիկ Հայր-սուրբի պէտք է խոստովանենք, որ ինքը Հ. Խաչիկն ևս համոզուելով՝ որ սիւնի հիմքի տակ ս. Վուսաւորչի մասունք չէ եղել, իւր ստորագրութեամբ այս մասին ոչ մի յօդուած չունի, և պաշտօնապէս Սինոդին չէ յայտնել: — Այժմ՝ դառնանք ս. Վուսաւորչի մարմնի զիւտի և տեղափոխութեանց պատմութեանը:

Ս. Վուսաւորչիք առանձնանալով՝ անյայտութեան մէջ Մանիա այրում վախճանուում է: Հովիւները այրի մէջ գտնելով ս. Վուսաւորչի մարմինը, առանց իմանալու թէ ո՞ւմն է, թաղում են: Շատ տարիներ յետոյ, աստուածային յայտնութեամբ Գառնիկ ճգնաւորը ս. Վուսաւորչի մարմինը հանում է Մանիա այրից, բերում Թորդան ու թաղում այնտեղ (Խորեն. զիւրբ բ. գլ. զա): Հանդ. Խորեն եպիս. Ստեփանէն Խորենացու աշխարհաբար թարգմանութեանը կցած

536 ծանօթութեան մէջ բաւական ընդարձակօրէն գնում է ս. Լուսաւորչի մարմնի գիւտի և տեղափոխութեան մանրամասնութիւնները: Նա ասում է, որ Զենոն կայսրը Ե. դարում ս. Լուսաւորչի նշխարներէց մի մասը թողնելով Հայաստանում՝ մնացածը տեղափոխել է Կ. Պօլիս: Հայաստանում մնացած մասը կտոր կտոր է արուել, և թանկագին քարերով ընդելուզուած ավերի մէջ դրուել ու բաժանուել է. իսկ Կ. Պօլիս տարուած մասը տեղափոխուել է Խալկիա և դրուել Նապօլի քաղաքի Բենեդիկտեան կրօնաւորների եկեղեցում: Հանդուցեալ Ալիշանը իւր «Արշալոյս և Արեւելք լուսաւորութեան Հայոց» յօդուածում (Բաղմազէպ նոյեմբ. 1901 թ. եր. 351) առանց աղբիւր յիշելու, որպէս մի հասարակեալ ճշմարտութիւն՝ ասում է, որ Զենոն կայսրը ս. Լուսաւորչի մարմինը տանել է տուել իւր մայրաքաղաքը: Պ. Կարապետ Կոստանեանցը «Ս. Լուսաւորչի Աջը» Արարատից (18)6 թ. հմբ. 5—6) արտատպուած իւր գրուածքի մէջ աւելի ևս մանրամասնաբար է գրում ս. Լուսաւորչի նշխարների գիւտի և տեղափոխութեան մասին: Պ. Կ. Կոստանեանցը յիշեալ գրուածքում ասում է. «Իհաւ Ե. դարում ս. Լուսաւորչի նշխարները Հայոց եկեղեցու սրբութիւնների մէջ նշանաւոր տեղ էին գրաւում: Ղազար Փարպեցին պատմում է, որ ս. Վարդանանց ժամանակ, երբ Հայոց նախարարներն պարսից դռնից վերադարձան Հայաստան, նոցա գիմաւորեցին «Դասք պաշտօնէիցն, բերելով ընդ ինքեանս գնշան կենսատու Խաչին և զնշխարս սրբոյ առաքելանման նահատակին Գրիգորի»: Նմանապէս պատմում է, որ երբ Վահան Մամիկոնեանը իբրեւ Հայոց սպարապետ Պարսկաստանից Դուլին եկաւ, Յովհաննէս Մանդակունի հայրապետը դիմաւորեց նրան «պատուական նշանաւ Խաչին և ս. Նշխարօք ճգնաղբեաց նահատակին Գրիգորի» (երես 20—30.):

Պ. Կ. Կոստանեանցը այսպէս ապացուցանելով, որ Ե. դարում Վարդանանց ժամանակ (450 թ.), ս. Լուսաւորչի նշխարքը որպէս նշանաւոր սրբութիւն ս. Խաչի հետ արդէն յարգւում էր, կարծում է, թէ Զենոնի Կ. Պօլիս տարածը ս. Լուսաւորչի նշխարի մի մասն կրկին էր, յայտնուած յունական բաժ-

նույն և յաւելցանում է. «Անբացատրելի կըմնան այն աւանդութիւնները որոնցից երևում է, թէ Բիւզանդիայից բերուած են Հայաստան ս. Լուսաւորչի նշխարները Թ. դարում Աշոտ Ա. թագաւորի ժամանակ: Այսու ամենայնիւ մեզ համար հաւաստին այն է, որ Ե. դարում կային Վաղարշապատում և ապա Դուինում ս. Լուսաւորչի նշխարներ»:

Այնուհետեւ պ. Կոստանեանցը մէջ բերելով Կաղանկատուացու աւանդածը ս. Լուսաւորչի նշխարների վերաբերութեամբ՝ զրում է. «Այս եղաւ Ներսէս Գ. Շինողի ժամանակ (632—671 թ.), որն և կանգնեց ս. Լուսաւորչի յիշատակի համար մի հոյակապ եկեղեցի, նրա աւերակներն այսօր էլ կան Վաղարշապատի արևելեան կողմը Երևանու ճանապարհի վերայ և կոչւում են Խանդարած եկեղեցի»:

Պ. Կ. Կոստանեանցը ամեն զգուշաւորութեամբ մէջ բերելով ս. Լուսաւորչի մարմնի տեղափոխութեան մասին աւանդուածը՝ երկու տեղ վրիպում է. Ա. նա ապացուցանելով, որ ս. Լուսաւորչի նշխարները Ե. դարից սկսած յայտնի էին և Հայրապետանոցի ուրիշ սրբութիւնների կարգում ս. Խաչի նշանի հետ առաջին տեղն էին բռնում՝ միանգամայն հաւատում է և Մովսէս Կաղանկատուացուն, որ ասում է. «Բերեալ էր իշխանն և մեծ զօրավարն (Գրիգոր Մամիկոնեան) Հայոց ի Թորդանայ, ի Դարանաղեաց գաւառէն զպատուական նշխարս սրբոյն Գրիգորի ըղորովին ամեն ոսկերօքն հանդերձ...» Իսկ Իսրայէլ եպիսկոպոսի թախանձանքին, ըստ նոյն Կաղանկատուացու, կաթուղիկոսն ու զօրավարը պատասխանում են. «Եթէ ոչ ուրեք երբեք քաշխեալ են նշխարք սրբոյն Գրիգորի, եւ ոչ մեք ունիմք իշխանութիւն հանել ի նմանէ մասն եւ տալ քեզ» (հատ. բ. գլ. ԼԸ), որից հետեւում է, թէ ս. Լուսաւորչի նշխարները զեռ մաս մաս բաժանուած չէին. որ ի հարկէ յայտնի հակասութիւն է Զինոնի Լուսաւորչի նշխարները Կ. Պօլիս տանելու աւանդութեանը և Ղազար Փարպեցու պատմութեան իսկութեանը, թէ հայրապետանոցում կար ս. Լուսաւորչի նշխարը: Բ. պ. Կ. Կոստանեանը ընդունում է ս. նշխարների Վաղարշապատ տեղափոխուելը Ներսէս Գ. ի օրով և նոյն Ներսէսի ձեռքով էլ սննդի տակ զրուե-

լը. մինչդեռ Կաղանկատուացին, ինչպէս ցոյց է տալիս ս. նըշխարների մասին գլխակարգութիւնը (հատ. բ. գլ. ԼԸ.), ս. նշխարների տեղամիտութիւնը գնում է Սահակ Զորափորեցու օրով, որ դահակալեց 677—703. իսկ Ներսէս Գ., ինչպէս տեսանք՝ 641—661 վարելով իշխանութիւնը, վաղուց վախճանուած էր, ուրեմն և չէր կարող իւր մահից մօտ 20 տարի յետոյ բերուած նշխարը իւր մահից մօտ 20 տարի առաջ հիմնարկուած եկեղեցու հիմքի տակ դնել:

Որովհետեւ ս. Լուսաւորչի նշխարներն ըստ Փարպեցու արդէն Ե. դարից գտնուում էին հայրապետանոցում, ուրեմն Կաղանկատուացու գրելը, թէ «բերեալ էր զպատուական նըշխարս սրբոյն Գրիգորի ընդորովին ամեն ոսկերօքն հանդերձ», և թէ «ոչ ուրեք երբէք քաշխեալ են եւայլն»՝ հակառակ է պատմութեան և կասկածելի: Որովհետեւ Կաղանկատուացին նշխարների Թորգանից բերուելը գնում է Գրիգոր Մամիկոնեանի միջոցով՝ Սահակ Զորափորեցու օրով, որ Զուարթնոց եկեղեցու հիմնարկութիւնից մօտ 35 տարի յետոյ հայրապ. աթոռ բարձրացաւ, ուրեմն և Յովհաննէս կաթողիկոսի զրոյցը, թէ Ներսէս Շինողը ս. Լուսաւորչի մարմինը չորսի բաժանելով դրեց եկեղեցու չորս հաստահեղոյս սիւնների հիմքում՝ բոլորովին հերքւում է. վասն զի, անհնարին ինչ է 40 տարի յետոյ բերուած ս. նշխարները դնել 40 տարի առաջ կառուցուած եկեղեցու սնների հիմքի տակ և այս գործողութիւնը կատարուած համարել հիմնարկութեան ժամանակ:

Ս. Լուսաւորչի նշխարների Ե. դարում վաղարշապատ բերուելն ու Զուարթնոց եկեղեցում դրուելը յիշուում է Ժ. դարից սկսած, այսինքն Զուարթնոց եկեղեցու հիմնարկութիւնից մօտ 250 տարի և աւերուելուց մօտ 150 տարի յետոյ. և յիշողներն են ա. Յովհաննէս պատմաբան, որ վարում էր իւր հայրապետական իշխանութիւնը 897—924 թիւը. բ. Մովսէս Կաղանկատուացին, որ ըստ մեզ՝ Ժ. դարի իսկ ըստ հանգ. Գ. Զարբանալեանցի (Պատմ. Հայ Դպր. Դ. Ժ. Դ դար) Ե. դարի պատմիչ է*): գ. վարդան վարդապետ

*) Մանօր: Զարբանալեանը կարծում է, որ Կաղանկատուացուն վերագրուած պատմութեան ք. հատ. ԽԵ. գլխից յետոյ շարա-

(Հատուած կից Սեբեոսի, հրատ. Ք. Պատկանեանի դ. յաւելուած եր. 56): Պատմիչների ժամանակագրութեան կարգով դնենք նրանց աւանդածը ս. Լուսաւորչի նշխարները Զուարթնոց եկեղեցում գրուելու մասին:

Ա. Մովսէս Կաղանկատուացի (ենթագրենք է. դարի պատմիչ) ասում է. «Ի ժամանակ այնոսիկ (Իսրայէլ եպիսկոպոսի Այրարատ գալու ժամանակ Սահակ Զորափորեցու և Գրիգոր Մամիկոնեանի օրով) բերեալ էր իշխանն մեծ և զօրաւորն Հայոց ի Թորգանայ ի Դարանազեաց դաւառէն զպատուական նշխարս սրբոյն Գրիգորի քոլորովին ամենայն ոսկերոքն հանդերձ յաշխարհս Հայոց յԱյրարատեան դաւառն ի Վաղարշապատ քաղաք և հանգուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցոյն, զոր մեծին ներսիսի շինեալ էր յանուն սրբոյն Գրիգորի» (հատ. բ. գլ. ԼԲ. եր. 187. Մոսկվ. 1860): Այս հատուածից երևում է, որ նշխարները Թորգանից բերուելով,—եթէ երբէք այդ բանը տեղի է ունեցել,—գրուել են ի յարկս եկեղեցոյն, և ոչ սիւների տակ, և եկեղեցու այրուելու կամ ամայանալու ժամանակ կարող էին այրուել կամ տարուել ուրիշ տեղ ու անհետանալ: Կրկնում ենք, Կաղանկատուացու աւանդածից երևում է, որ ս. նշխարները գրուել են արդէն շինած եկեղեցու յարկում և ոչ շինուելիք եկեղեցու հիմքի մէջ:

Բ. Յովհաննէս կաթողիկոսը չը յիշելով, թէ որտեղից բերուեցին ս. Լուսաւորչի նշխարները, գրում է. «Իսկ ի հիմնարկել զպատուածակերտ փարախն բանաւոր հօտին Քրիստոսի ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսիցն բաժանեալ դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի, առ ի յանշուշտ մնացականութեամբ պահիլ զանձոյն երկնաւորի ի գերչաց ապականչաց, և ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց: Իսկ զքրիստոսադրոշմ և զպատուական գլուխն ոչ ի խորոջ,

յարել է ժ. դարում Մովսէս Դասխուրանցի: Գեր. Տ. Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցը իւր Պատմ. Աղուանից գրքի ա. հատորում երկրորդելով Հ. Զարբանալեանի կարծիքը, ասում է, որ երկու Մովսէսների անուան նոյնութիւնից շփոթութիւն է առաջացել և Դասխուրանցու շարունակութիւնն էլ վերագրուել է Կաղանկատուացուն:

այլ արտաքոյ ի գղթոցի եղեալ՝ զնէ ի գանձարանս աստուածութեան ի յոյս բարեաց փափագողաց նմա և ի բժշկութիւն ակստացելոց» (Յովհ. կթղ. Երուս. 1843 թ. եր. 59)։ Այս հաստուածից երևում է, որ Ներսէս Շինողը ս. Գրիգորի նշխարքը չորսի բաժանելով եկեղեցու հիմնարկութեան ժամանակ զբեղ է չորս հաստահեղոյս սների հիմքի տակ. իսկ գլուխը՝ գղթոցի մէջ դուրսը, ուխտի համար։ Արդ, եթէ ըստ Կաղանկատուացու Գրիգոր Մամիկոնեանը Սահակ Զորափորեցու օրով, 677 թուից յետոյ, Թորդանից բերեց ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարքը, Ներսէս Գ. 641—648 թ. եկեղեցին հիմնարկելիս՝ նշխարների տեղափոխութիւնից մօտ 40 տարի առաջ, ինչպէս կարող էր եկեղեցու հիմքում զնել, ակներև անհեթեթութիւն։ Ի նկատի ունենալով, որ Յովհաննէս պատմաբանը իրանից առաջ եղած անցքերը պատմագրերից ընդօրինակում է քան շարադրում և Ներսէս Գ. ի անցքերը գրելիս նրա աղբիւրն էր Աբեղոսը, ուր այդպիսի բան չըկայ, Մայր Աթոռոյս միաբան՝ ձեռագրերի և հայ գրականութեան քաղմահմուտ Սահակ վարդապետ Ամատունին կարծում է, որ այդ յաւելուածը յետին ժամանակի գործ է։ Այդ տեսակ յաւելումներ գրիչները թոյլ էին տալիս իրանց օրինակ, Երուսաղէմում տպածի «Այս եղև սկիզբն ժամատան շինելոյ» մինչև ցայս վայր ոչ երևիւր ի հայս» ձեռագրերում և ուրիշ տպագրութիւնների մէջ չըկայ։ Եւ յիրաւի. Յովհաննէս պատմաբանը համարեա բառացի կերպով կրկնում է Աբեղոսի աւանդածը ս. Հռիփսիմի տապանի երևման մասին (Յովհ. կթղ. Երուս. եր. 52). չի շեղւում նա Աբեղոսի աւանդած կարգից Զուարթնոց եկեղեցու պատմութիւնն անելիս՝ թէ հիմնարկութեան և թէ Շինողի վեցամեայ տարագրութիւնից յետոյ շարունակութեան վերաբերութեամբ (եր. 59 և 62)։ Եթէ Յովհաննէս պատմաբանի աղբիւրն էր Աբեղոսը՝ Աբեղոսում հիմնարկութեան ժամանակ ս. նշխարների սների տակ դրուելու մասին խօսք չըկայ։ Արդ, Յովհաննէս կաթողիկոսը ո՞ր տեղից հնարեց այդ, քանի որ իրանից առաջ եղող Աւոնդ պատմագրի մէջ ևս այդ հաստուածը չըկայ։ Պարզ երևում է, որ արդարև այդ ամբողջ հաստուածը յետին ժամանակի

գործ է. իսկ եթէ իւր իսկ գրածն էլ է, անհիմն է, որովհետեւ հակասում է պատմական ցուցմունքներին և ժամանակագրութեանը:

Գ. Ստեփաննոս Ասողիկ(բ. հանդէս, բ. գլ. եր. 82) գրում է. «Իսկ յաւուրս վահանայ յայտնեցաւ նշխարքս. Առաքելոյն Թադէոսի և Սանդիսոյ և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»: Վահանը Գրիգոր Մամիկոնեանից 200 տարուց աւելի առաջ էր. եթէ վահանի ժամանակ յայտնուեցս. Լուսաւորչի նշխարքը՝ Գրիգոր Մամիկոնեանը 200 տարի յետոյ Թորդանից էլ ի՞նչ բերեց, որ ինչ գրուէր Զուարթնոց եկեղեցու յարկում կամ նրա սիւների տակ:

Դ. Սամուէլ Անեցին գրում է. «ՆՂԼ. Եգիտ Գառնիկ երանելի զնշխարսս ս. Գրիգորի ի Մանեայ այրն, և հանգուցին ի Թորդան»:—վաղուց արդէն գտնուած էր:

Ե. Վարդան վարդապետ (Սեբեոսի յաւելուած հրատ. Ք. Պատկանեանցի եր. 56) կրկնելով ս. նշխարների՝ սիւների հիմքում գրուելու մասին, գրոյցը՝ ասում է. «Եւ զսուրբ Գրիգորի նշխարն ասեն բերեալ ի Հայս Գրիգորոյ Մամիկոնենոյ ի գնալն նորա դեսպան ի Կ. Պօլիս՝ տուեալ ցնա կին ոմն յաւագաց, որ ունէր առ իւր: Եւ նորա զաղտ հանեալ ի ծով և անցեալ գայ բերէ անգիտելի քաղաքին զգանձն անանց մեծութեան: Եւ զծնօտն տայ Աղուանից ի խնդրոյ Զիւանշիրի և քեռ իւրոյ, որ էր կին Գրիգորի»: Ծնօտի պատմութիւնը առնուած է Կաղանկատուացուց: Բայց Կաղանկատուացու հակառակ՝ ս. նշխարների փոխադրութիւնը փոխանակ Թորդանից գնելու, Կոստանդնուպօլսից է դնում: Հակասութիւնները միմիանց հերքելով հաստատում են Ղազար Փարպեցու ասածը, թէ ս. Լուսաւորչի նշխարը հայրապետանոցի սրբութիւններից առաջինն էր, որ մնացել էր Հայաստանում Ե. դարից սկսած. այդ նշխարը ս. Լուսաւորչի Աջն է, որ անկապտելի գանձն է հայրապետանոցի, և բացի այդ գանձից նշխարների մասին մնացեալ զրոյցները անհեթեթ առեղծուածներ են: Այդ առեղծուածը ճշմարտութիւն են համարել յետին պատմիչները և առանց քննելու՝ կրկնել են Յովհաննէս պատմաբանի զրքում եղածը, թէ ս. Լուս-

սաւորչի նշխարները Ներսէս Գ. զրեւ է իւր կառուցած Զուարթնոց եկեղեցու սիւների հիմքի տակ՝ հիմնարկութեան ժամանակ։ Այդպէս է վարուել Յովհաննէս եպիսկոպոս Շահաթութունեան, Աբէլ եպիսկոպոս, վարուել ենք մենք (Եկեղ. պատմ. տպ. ս. 12 մ. 1884 թ.) և այլք։ Այժմ խելամտելով և պատմութեան զանազան պարագաները աչքի առաջ ունենալով՝ տեսնում ենք որ սխալուել ենք. ուստի այս յօդուածով ուղղում ենք մեր սխալը։

Զ. Հանգուցեալ Ալիշանը Զուարթնոց եկեղեցու պեղումներէից դեռ 11 տարի առաջ 1890 թուին հրատարակած իւր «Այրարատ» տեղագրութեան մէջ, առանց կանխակալ կարծիքների, իրան յատուկ զգուշաւորութեամբ գրում է. «Կարծես մի սխալ կայ այս խօսքերի (Յովհաննէս պատմագրի) մէջ. նախ՝ որ առաջին և ժամանակակից պատմիչը (Եւսեբեոս) երկնաւոր Զուարթունների անունով է կոչում եկեղեցին, և երկրորդ, Ներսէսի ժամանակ դեռ եւս չէին բերուել Այրարատ ս. Լուսաւորչի նշխարքը» (եր. 245. էջ բ.)։ Մենք դիտեմք աշխարհաբար թարգմանուած մէջ բերինք Հ. Ալիշանի խօսքերը, որ ամենքին հասկանալի լինեն։

Է. Պ. Կ. Կոստանեանցը ս. Լուսաւորչի նշխարների Բիւզանդիայից տեղափոխութիւնը ըստ աւանդութեան դնում է Թ. դարում։ Աշոտ ա. թագաւորի օրով։—Եթէ Թ. դարում տեղափոխուեց Բիւզանդիայից ս. Լուսաւորչի նշխարը, ուրեմն սխալ է Կաղանկատուացու ասելը, թէ Գրիգոր Մամիկոնեանը Թորգանից բոլոր նշխարները ոսկերոտեօք հանդերձ բերեց Վաղարշապատ, որովհետեւ ս. նշխարները պէտք է որ Ե. դարի վերջերին Զենոն կայսրի օրով Կ. Պօլիս տարուած լինէին. սխալ է և Յովհաննէս կաթողիկոսին վերագրած խօսքը, թէ նշխարները չորսի բաժանելով՝ Ներսէս Շինոգը Է. դարում զրեց իւրակառոյց եկեղեցում հիմքի տակ։

Ը. Բարձր. Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեանն ևս Արարատում (Նոյեմբեր-Դեկտեմբեր 1901 թ.) «Մի հարեանցի նկատողութիւն» յօդուածի մէջ ընդունում է ս. Լուսաւորչի նշխարների Ե. դարում յայտնի լինելը, ուստի և ասում է. «Անհաւանական է, որ արդէն սուրբերի կարգն անցած Լուս-

աւարչի հետ գաղափարական կապ պահպանելու համար Գիւտի ժամանակից սկսեցին Հայոց կաթողիկոսներն իրենց մօտ պահել ս. Լուսաւորչի նշխարները, և այդ նշխարները դրուեցան առաջին անգամ այն եկեղեցու հիմքում, որ ս. Գրիգոր կոչուելով պէտք է այնուհետեւ հայրապետական Մայր եկեղեցի՝ «Կաթողիկէ» լինէր: Յամենայն դէպս, կրկնում ենք, այս ս. Գրիգորն էր Դուինի եկեղեցին...» և, շարունակելով խօսքը Դուինի ս. Գրիգորի եկեղեցու շինութեան մասին՝ Հայր Կարապետն ասում է. «Ամենայն հաւանականութեամբ այս և ոչ Վաղարշապատի «Զուարթնոց» եկեղեցուն է վերաբերում նաև պ. Կոստանեանցի յառաջ բերած յիշատակաբանի այն տեղեկութիւնը, թէ Ներսէս Գ. Բիւզանդիոյ Կոստանդ կայսեր ծախքով շինեց «զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի Քաղաքուղաշտի ի սուրբն Գրիգոր»: Հ. Կարապետը պնդում է, որ Քաղաքուղաշտը այստեղ պէտք է Դուին հասկանալ: Մի խօսքով Հ. Կարապետն էլ ընդունելով, որ Ե. դարում ս. Լուսաւորչի նշխարները յայտնի էին լուելեայն հերքում է Կաղանկատուացու և Վարդանի աւանդութիւնները ս. Լուսաւորչի մարմնի տեղափոխութեան մասին, և, չուզենալով հերքել Յովհաննէս կաթողիկոս պատմաբանի գրքում եղածը, թէ ս. Լուսաւորչի նշխարները դրուել են Քաղաքուղաշտի ս. Գրիգորի եկեղեցու սների տակ, Քաղաքուղաշտ համարում է Դուինը և ս. Գրիգոր համարում է Դուինի ս. Գրիգորը: Սակայն Դուինի ս. Գրիգորը, ինչպէս աւանդում է պատմութիւնը, (Յովհ. պատմ. կթղ. եր. 41) շինուած է Ե. դարում Վարդան Մամիկոնեանի ձեռքով, Ներսէս Շինողից աւելի քան երկու հարիւր տարի առաջ. ուրեմն Ներսէս Գ. չը լինելով կառուցանողը այդ եկեղեցու՝ չէր էլ կարող նրա հիմքի տակ ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարները դնել: Ճշմարիտ է, Դուինի ս. Գրիգորը այրուեց պարսիկներից Կաւաթի որդի Խոսրով թագաւորի օրով (Սեբ. գլ. ա.), բայց Խոսրովը թագաւորում էր ըստ Ասողկի՝ (գլ. բ. եր. 83) Փրկչի 527—575 թ., ըստ Նէօլդէքէի (պ. եղեան Ասողկի 85 ծանօթութիւն) 531—579 թ.: Սերեոսը Դուինի ս. Գրիգորի այրուելը զնում է Խոսրովի թագաւորութեան 41-րդ

տարում: այսինքն Փրկչի 572 թ.: Դուինի ս. Գրիգորի վերաշինութիւնը Արքահամ կաթողիկոսը (Սեր. ԺԵ.) իւր հայրապետութեան վերջին տարիներին սկսեց և աւարտեց եզրը (Սեր. ԻԳ. եր. 78): Այսպէս Դուինի ս. Գրիգորը վերաշինուել սկսուելով Ներսէսից 37 տարի առաջ, նրա նախորդի օրով արդէն աւարտուած էր: Այդ եկեղեցում եղաւ 648 թ. Դուինի ժողովը ընդդէմ Յունաց (Սեր. գլ. եր. 119): Այդ եկեղեցում Բիւզանդիոյ կայսր Կոստանդինի ներկայութեամբ Ներսէսը հաղորդուեց յունածէս պատարագին և դահլնկէց եղաւ (Սեր. ԼԵ. եր. 141): Արդ, եթէ Դուինի ս. Գրիգորը, որ Ներսէս Գ-ի նախորդ եզրի օրով արդէն վերանորոգուած վերջացած էր, էլ ինչպէս կարող է Ներսէսի ձեռքով և Կոստանդինի ծախքով ի հիմանէ շինուել. չէր էլ կարելի նրա դարերով առաջ դրուած հիմքի տակ դնել ս. Լուսաւորչի նշխարները, որ, ըստ Կաղանկատուացու թորդանից բերուել էր Սահակ Զորավորեցու օրով 677 թուից յետոյ, այն ժամանակ՝ երբ Ներսէս Գ. մօտ 20 տարի առաջ վախճանուած էր:

Մեր կարծիքով Հ. Կարապետը մի սխալ ուղղել կամենալով ուրիշ սխալի մէջ է ընկել: —Ս. Լուսաւորչի նշխարը Գիւտ կաթողիկոսից էլ առաջ յայանի էր. Քաղաքուղաշար միշտ Վաղարշապատն է եղել և ոչ Դուինը, Ներսէս Գ-ի շինած ս. Գրիգորը (Կոստանդինի ծախքով) Վաղարշապատինն է և ոչ Դուինինը:

Հետաքրքիր է և ս. Լուսաւորչի մարմնի տեղափոխութեան պատմութիւնը. —Մովսէս Կաղանկատուացին ասում է (Բ. հատ. գլ. ԼԸ.), որ Վարագ-Տրդատ իշխանը Գլխոյ վանքի Խորայէլ եպիսկոպոսին ուղարկում է Այրարատ Մեծ Հայրապետի (Սահակ Զորավորեցու) մօտ: Այն ժամանակ Հայոց մեծ զօրավարը (Գրիգոր Մամիկոնեան) Գարանդեաց գաւառի Թորգան գիւղից Վաղարշապատ է բերած լինում ս. Գրիգորի նշխարները բոլոր ոսկրներով եւ հանգուցած Ներսէս Շինողի կառուցած նորաշէն եկեղեցում: Խորայէլ եպիսկոպոսը կաթողիկոսից և Հայոց զօրավարից թախանձելով խնդրում է ս. Գրիգորի նշխարներից մասն: Հուսկ ուրեմն Հեղինէ դշտոյի

(որ Աղուանից աշխարհիցն էր) միջնորդութեանը զիջանելով կաթուղիկոսն ու զօրավարը տալիս են Իսրայէլին ս. Լուսաւորչի ծնօտի մասը: Իսրայէլ եպիսկոպոսը ուրախութեամբ վերադառնում է Աղուանք և ս. մասունքը հազուցանում իւր մենաստանում — Գլխոյ վանքում:

Ըստ Մովսէս Կաղանկատուացու՝ Վարազ-Տրդատի օրով Իսրայէլ եպիսկոպոսը եկաւ Այրարատ և Սահակ Զորափորեցուց ստացաւ ս. Լուսաւորչի ծնօտը Հեղինէ գլխոյի միջնորդութեամբ, որ Աղուանցի էր: Վարդան վարդապետը դէպքը պատահած է համարում Զուանշիրի օրով՝ որ Վարազ-Տրդատի հօր եղբայրն էր, և Հեղինէ գլխոն ոչ այլ ոք էր, եթէ ոչ նոյն Զուանշիրի քոյրը և Գրիգոր Մամիկոնեանի կինը:

Մեր կարծիքով՝ Մովսէս Կաղանկատուացին է. դարի պատմիչ չէ, այլ ժ. և միևնոյն Մովսէս Դասխուրանցին է, որ Աղուանից պատմութիւնը հասցնում է մինչև Թ. դարի վերջը (հատ. գ. զլ. ԻԲ.), իսկ կաթուղիկոսների ցանկը մինչև ժ. դարի վերջը (998):

Այդ Մովսէս Դասխուրանցին կամ Կաղանկատուացին Գլխոյ վանքում եղած ս. Լուսաւորչի անունը կրող մասունքին պատմական նշանակութիւն տալու համար՝ յերկրում է ս. Լուսաւորչի մարմնի բոլոր ոսկերքն հանդերձ տեղափոխութիւնը Դարանաղիքից, որպէս զի կարողանայասել թէ Գլխոյ վանքի մասունքն էլ ս. Լուսաւորչի ծնօտն է, այնտեղ բերուած Իսրայէլ եպիսկոպոսի ձեռքով, Աղուանից Վարազ-Տրդատ և Հայոց Գրիգոր Մամիկոնեան զօրապետների օրով, Սահակ Զորափորեցու ժամանակ:

Կաղանկատուացին՝ լինի նա է. թէ ժ. դարի պատմիչ, ս. Լուսաւորչի նշխարների տեղափոխութեան մասին չի կարող արժանահաւատ աղբիւր համարուել, որովհետեւ նա (Ա. հատ. ԻԱ. գլխում երես 50) առաջ էլ ասել է. «Գտանէր (Վաչական) և զամենասուրբ նշխարս Գրիգորի և զյոյժ հռչակելոյն Հովսիսիմեայ և Գայիանեայ՝ ի Դարահոջ գեօղն՝ որ է ի նահանգին Արցախայ, զոր էր բերեալ երկցուն Մատթէ անուն, ի Յովհաննէ Հայոց կաթուղիկոսէ, զոր ունէր նորին մատանետուն կնքեալ. առաքեալ անդ երկցունս, առնոյր առ իւր»: Իսկ Վաչա-

կան Գ. Թադաւորի իշխանութիւնը և Շուփհաղիշէի հայրապետութիւնը ընկնում է և. դարի վերջին քառորդին: Այստեղ ակնարկուած Յովհան կաթողիկոսը կարող էր լինել Յովհան Մանգակունին: Եւ նշխարքը կնքուած է հայրապետի մատանիով:—Արդ, եթէ ըստ կաղանկատուացու և. դարի վերջին արդէն Վաչական Թադաւորը ստացել էր՝ ս. Գրիգորի, նաև ս. Հռիփսիմեանց, նշխարները՝ ուրեմն ս. Լուսաւորչի նշխարները վաղուց, մօտ 200 տարի առաջ հանուած էին արդէն Թորդանի հանգստարանից և գտնուում էին Աղուանքում: Գրիգոր Մամիկոնեանը էլ ինչ հանեց այդ հանգստարանից և Խորայէլ եպիսկոպոսը ինչ տարաւ:

Մենք ասացինք, որ ս. Լուսաւորչի մասունքները չեն ամփոփուած Խանգարած եկեղեցու հաստահեղոյս սիւների տակ, և ցոյց տուինք յետին պատմիչների այն հակասութիւնները, որոնք ապացուցանում էին մեր ասածը: Այժմ տեսնենք ժամանակակից պատմիչ Սեբեոսը Զուարթնոց կամ Խանգարած եկեղեցու հիմնարկութեան համար ինչ է ասում: «Յայսմ ժամանակի արկի միտս իւր կաթողիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ եկեղեցեացն՝ որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին, յորում, ասեն, ընդ առաջ եղև Թադաւորն Տրդատ՝ սրբոյն Գրիգորի: Նինեաց անդ եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոց, որոց երևեալ ի տեսեան սրբոյն Գրիգորի բաղմութիւն երկնաւոր զաւրացն. և շինեաց եկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեալք, արժանի ազտուածային պատուոյն՝ որում նուիրեացն» (Երես 118—119): Այստեղ ամենևին յիշատակութիւն չըկայ հիմնարկութեան ժամանակ ս. նշխարների սների հիմքում դրուելու մասին: Ժամանակով ամենամօտ Ղևոնդ պատմիչը (Ը. դար) նոյնպէս ոչինչ չէ գրում նշխարների մասին. ոչինչ չեն գրում Ստեփաննոս Ասողիկ, Սամուէլ Անեցի և այլն:

Եթէ այդ ժամանակ ս. Լուսաւորչի նշխարների տեղափոխութիւն լինէր, և տեղափոխուած նշխարները դրուած լինէին Զուարթնոց եկեղեցու սների հիմքի տակ, մի՞թէ ականատես Սեբեոսը կը լռէր՝ այն Սեբեոսը, որ մեծ ոգևորութեամբ նկարագրում է ս. Հռիփսիմի տապանի երևումն

նրա վկայարանի վերաշինութեան ժամանակ: Հետաքրքրութեան համար դնենք այդ նկարագրութիւնը (88—89). «Եւ եղև յամի ԻՒ. բորդի թագաւորութեան Ապուրէզ Խոսրովու՝ քակեաց կաթուղիկոսն Կուսիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, զոր շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթուղիկոսի՝ որդւոյ սրբոյն Ներսիսի:

«Արդ, մինչ քակէին զորմ մատրանն, երևեցաւ յանկարծակի լուսաւոր և չքնադադրւած արքունական մարգարիտն՝ այսինքն կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմէի: Եւ քանզի անգամ անդամ յաւշեցին զնա յաւշեալ ի միմեանց. և երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով և մատանեաւ երանելւոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի, զոր նա ոչ համարձակեցաւ բանալ: Եւ կնքեալ իւրով ևս մատանեաւ, որ արժանի իսկ էր կնքել զայսպիսի մարգարիտ՝ երկից հաւատարմաց երրորդ մատանեաւք:

«Ո՛վ մարգարիտ, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէն և սնեալ ի գիրկս սրբութեան, և նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեսանել զքեզ արդարք և խանդակաթ էր ի սէր քո երանելին Կուսիտաս:

«Չափ հասակի էր երանելւոյն ինն թղաւ և չորս մատունս. և դղրդեալ ամենայն կողմն հիւսիսոյ գայր յերկրագութիւն. և բազում ախտաժետաց լինէր բժշկութիւն ամենայն ցաւոց: Շինեաց զեկեղեցին՝ և զերանելին եթող ի բացեայ վասն գիջութեան որմոյն, մինչև յցամաքել որմոյն, ապա ամփոփեցաւ ի կայանս իւր»:

Արդ, եթէ ս. Հռիփսիմէի նշխարներէ երևումն այսքան ոգևորութիւն է առաջ բերում, միթէ ս. Կուսաւորչի նշխարները կարող էին լռելեայն բերուել և առանց կնքեալ տապանակի շող տրուել սների հիմքի տակը, գէջ հողերի մէջ, թողնելով որ հիմքից սուղւող կրաղանգի ջուրը աւելի ևս գիջութիւն պատճառէր հողին, որի մէջ անշուշտ փթութեան կեննթարկուէր ս. նշխարը: Առաքել պատմագիրը (գլ. ին) նկարագրելով ս. Գայիանէի և ս. Հռիփսիմէի վանքերի

նորոգութեան ժամանակ ու կոյսերի տապանների երեւումն ու Գայիանեանց համար ասում է. «Անդէն եզիա երիտապանս ի ներքոյ հիման եկեղեցոյն... և ընդ բանալ կափարիչ վիմացն...» Ա. Հռիփսիմեանց համար գրում է. «Աստ ևս յայտ եկեալ գտաւ նշխար Սրբուհի կուսին Հռիփսիմեայ՝ ոչ միայն ի միում տեղեւոյ, այլ յերիս տեղիս... զերկու տեղեաց նշխարքն ի մէջ վիմաց եղեալ էին, և զմինն, որ և բազում էր նշխարքն, եղեալ էին ի մէջ փայտեայ արկեզ, որ է սնդուկ և տեղի փոքրիկ իբրեւ զմատուռն, շինեալ վասն նշխարաց» (տես և գլ. ԺԶ.):

Մովսէս Կաղանկատուացին (Ա. հատոր ԻԱ. երես 50) և Սերեռան ասում են, որ սրբոց նշխարները կնքւում էին հայրապետների կնիքով, և Առաքել պատմագրից տեսանք՝ որ նշխարները դրւում էին տապանի մէջ: Իբրեւ ժամանակակից կասեմք. 1870 թուականներին, երբ Գէորգ Դ. կաթողիկոսը քանդել էր տալիս Օշականի ու Մեսրոպի հին եկեղեցին՝ նորը շինելու համար, հարաւային դրանը մօտիկ, որմի մէջ, մի քարեայ տփում մետաքսեայ թաշկինակներով խնամքով ծրարած սրբոց մատուցները դանդեցին: Կրկնում ենք՝ որմի մէջ, քարեայ տփում, և ոչ հողի մէջ շաղ տուած: Սրանից երևում է, որ հնումն սրբոց նշխարները պահւում էին տփի կամ տապանակի մէջ: Բացի այդ պահանջւում էր կարեւոր վկայութիւն:

Նիկիական կանոնները լրացնող Հայոց վարդապետների «Սահմանք և Կանոնք»-ի ԺԵ. յօդուածն ասում է. «Եթէ ոք նշխարս մարտիրոսաց կամիցի դնել, առանց եպիսկոպոսի աշխարհին մի դիցէ...: Եթէ ոք ի սուրբ տեղեացն մարտիրոս բերէ, առ եպիսկոպոսն բերցէ վկայութեամբ եւ թղթով եպիսկոպոսացն, ուստի բերին, և իւրեանց եպիսկոպոսի հրամանաւն դիցին՝ ուր արժան է» (Ժող. Պատմ. Աբէլ արքեպիս. Վաղարշ. 1874 թ. եր. 66.): Աւելորդ ենք համարում այլ վկայութիւններ բերել, որովհետեւ առանց նրան էլ մեր գրութեամբը շատ երկարեց:

Եթէ ս. Առսաւորչի նշխարները դրուած լինէին Զուարթնոց եկեղեցու սների տակ, անշուշտ, վերեւ յիշուած զգուշաւորութիւնները կատարուած կը լինէին. բայց սիւնի պեղ-

ման ժամանակ չերեաց ոչ կնքած և ոչ անկնիք տուփ, որի մէջ գրուած լինէին ս. նշխարները, և ոչ վկայութեան թղթեր: Այսպէս հերքուում է Յովհաննէս պատմաբանի, եթէ յիրաւի ուրիշը չէ աւելացրել, ասածը ս. Լուսաւորչի նշխարների Զուարթնոց եկեղեցու սների տակ գրուած լինելու մասին: Հերքում է ս. Լուսաւորչի նշխարների որ և է եկեղեցու հիմքի կամ սների տակ գրուած լինելու անհեթեթ զրոյցը. մենք էլ ազատուած ենք ս. նշխարները գտնելու համար ըստ Հ. Կարապետի՝ Դուինի ս. Գրիգորի, իսկ ըստ Հ. Խաչիկի՝ Վաղարշապատի առապարի Զուարթնոց եկեղեցու հիմքերը պրպտելու հարկից: Մնում է ս. Լուսաւորչի նշխարների Ե. դարից սկսած յայտնի լինելու հարցը: Այդ հարցն էլ բաւական լուսաբանուած է պ. Կ. Կոստանեանցի «Ս. Լուսաւորչի Աջը» գրքուկի մէջ:

Ս. Լուսաւորչի նշխարները Ե. դարում արդէն Հայրապետական Մայր Աթոռումն, այսինքն Վաղարշապատի Կաթողիկէումն էին. յետոյ Հայրապետական Աթոռի հետ տեղափոխուեցին Դուին և այլուր. վերջապէս զանազան տեղեր մաս մաս բաժանուելով՝ Ե. դարի վերջին քառորդին մի մասն Զինոն կայսրի օրով տարուեց Կ. Պօլիս, իսկ հայրապետանոցի կարեւոր մասն էլ 1441 թուին հայրապետական Աթոռի հետ նորից վերահաստատուեց ս. Եջմիածնում՝ ի դէմս ս. Լուսաւորչի Աջի, որ այժմ Մայր Աթոռիս կարեւոր սրբութիւններից առաջինն է:

Դ.

Զուարթնոց եկեղեցու աւերակները հողի քանձը շէրտի տակ ծածկուած չէին, եւ Հ. Խաչիկը միայն պատմական ցուցմունքներով չէ յայտնագործել ու պեղումն սկսել:

Ով մի անգամ Վաղարշապատի և Երևանի միջև ճանապարհորդութիւն է կատարել, Վաղարշապատից 4 վերստի վերայ, ճանապարհից $1\frac{1}{4}$ վերստ դէպ ի հարաւ, տեսել է դեանի մակերևոյթից երկու սաժէն բարձրութեամբ Զուարթնոց եկե-

ղեցու փլուածքի կրազանդուածքը: Ուրիմն Զուարթնոց եկեղեցին մոռացուած և հողի թանձր շերտերի տակ անհետացած հնութիւն չէր:

Բացի օտարազգիներից՝ Ժ. Դարում իրանց զրուածքների մէջ Զուարթնոց եկեղեցու մասին գրել են մերայիններից շատ շատերը. յիշենք մի քանիսին.

ա. Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեան բաւական տեղեկութիւններ տալով Զուարթնոց եկեղեցու մասին գրում է (Ստոր. կաթ. Էջմ. և հինգ գաւառ. Արարատայ տպ. 1842 թ. հատ. ա. եր. 285—290). «Կան այժմ և երեւին իսկ որպէս հիմունք եկեղեցւոյն և աւելի քան զմարդաշատ՝ բարձրութիւնք սեանցն, զուրկ յարտաքին կոփածոյ քարանց: Նմանապէս երեւին և հիմունք պարսպի նորա և բրգանցն և առ նովաւ սենեկացն իսկ. որ և ասի հանգած եկեղեցի, և անունն նորա Գրիգոր»: Այսպէս գրում էր նա պեղումից 60 տարի առաջ:

բ. Մենք ասել ենք. «Այս եկեղեցին, որի ընկորներն անգամ հիացք են ընդում՝ մարդու վերայ՝ գտնվում է Վաղարշապատից $4\frac{1}{2}$ ժամ հեռաւորութեամբ դէպ ի արեւելք» (Եկեղ. պատմ. տպ. 1884 եր. 226.): Այսպէս գրել ենք պեղումից 18 տարի առաջ:

գ. Պ. Կ. Կոստանեանցը 1896 թուին (ս. Լուսաւորչի Աջը գրքում) ասում է. «Նայելով այդ շինութեան արդի բեկորներին՝ արդարեւ, չէ կարելի չը զարմանալ շէնքի ընդարձակութեան, շքեղութեան և ամրութեան վերայ» (եր. 26): Այսպէս գրում է պեղումներից 4 տարի առաջ: Ուրեմն եկեղեցու բեկորները յայտնի էին: — Այնպիսի ժամանակի մէջ ենք ապրում, որ ամեն օր ամենքից տեսնուած բանն էլ, մինչև անգամ արևի ծագումն՝ վկաներով պէտք է հաստատենք:

Զուարթնոց եկեղեցու փոքր սիւնների խոյակներից մի քանիսը, եթէ չեմ սխալուում, Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի օրով, թերևս Յովհ. Եպիսկոպոս Շահխաթունեանի նախաձեռնութեամբ՝ բերուելով ս. Էջմիածին, այժմ զրուած են ձեմարանի բակում հարաւային կողմը: Այս խոյակների համար պ. Կոստանեանցը գրում է. «Եւրոպական հնագէտ-

ները բաղմիցս ուսումնասիրել և նկարագրել են այդ խոյակները. նոքա կողովածե կերտուած ունեն և քանդակները շատ նուրբ են. իւրաքանչիւր երկուսի վերայ կան մի և նոյն յունարէն տառերը խաչածե քանդակած Ներսէս Գ. Շինողի անունով» (ս. Լուսաւորչի Աջը երես 26—27): Պ. Կ. Կոստանեանցը կարծում է, որ այդ խոյակները մեծ, կամ ըստ Դրասխանակերտցու՝ չորս հաստահեղոյս սիւնների խոյակներն են: Այժմ, յատակի բացմամբ յայտնի եղաւ, որ դրանք մեծ սիւնների խոյակները չեն, այլ փոքր:

Ճեմարանի բակում եղած այս խոյակները գտնելու համար պէտք է որ պեղումն եղած լինի Զուարթնոց եկեղեցում ժ. Թ. դարի սկզբին: Հ. Խաչիկի պեղումից դեռ չորս տարի առաջ Մայր Աթոռիս միաբան Հ. Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեանը Զուարթնոց եկեղեցու հարաւային արեւմտեան մի հաստահեղոյս սիւնը մինչեւ եկեղեցու յատակի մակերևոյթը բացել էր, և գուցէ ամբողջ յատակը բանար՝ եթէ մի ձախող հանգամանք արգելէք զգաւար: Ուրեմն Զուարթնոց եկեղեցին մի կորած ու անյայտացած եկեղեցի չէր, որ հ. Խաչիկը գտնէր, և նա չէ միայն, որ Զուարթնոց եկեղեցու պեղման մասին մտածել ու գործել է՝ նրանից առաջ էլ ուրիշները նոյնը արել են, բայց հ. Խաչիկին է յաջողել գործը աւարտել:

Թէև Զուարթնոց եկեղեցին Վաղարշապատի կենտրոնում չէ եղել, ս. Լուսաւորչիը այնտեղ չէ տեսել յայտնի տեսիլը, նա Վաղարշապատի Կաթողիկէն չէ և նրա մների տակ չեն գրուել ս. Լուսաւորչի նշխարները, բայց Զուարթնոց եկեղեցին իբրեւ 1260 տարուայ հնութիւն արժանի է ուշադրութեան. իսկ այդ հաղարամեայ աւերակ եկեղեցու ամբողջ յատակի բացմամբ, որով հաւաստիացանք, թէ Զուարթնոց եկեղեցին արժանի էր մեր պատմիչներից կոչուելու «բաղմապայծառ փարախ բանաւոր հօտից», զանազան յօրինուածով հրաշապայծառ եկեղեցի», «գարմացուցիչ տիեզերաց» — պարտական ենք Հ. Խաչիկին:

Չը նայելով, որ մեր բոլոր պատմիչները, որոնք յիշում են այդ եկեղեցու անունը, միշտ հիացմամբ են յիշում այնուամենայնիւ այդ եկեղեցին երկարատեւ գոյութիւն չէ ունեցել: Զուարթնոց եկեղեցու կարճատեւ գոյութեան պատ-

Ճառները մեր կարծիքով՝ եթէ մի կողմից տաճիկների յարձակումներն ու աւերմունքներն են եղել, միւս կողմից էլ եղել են՝ ա. տեղի առապար լինելն ու անմարդաբնակութիւնը. բ. հեռաւորութեան պատճառով՝ անյարմարութիւնը իւր իսկական նպատակին ծառայելու, այն է, վաղարշապատի եկեղեցիներին մերձ՝ հայրապետական բնակարան լինելու. գ. ժողովրդի և ազգի անտաքերութիւնը դէպի եկեղեցին, ատելութիւնը դէպի կառուցանողի արձնաւորութիւնը և չըհամակրելը շինութեան հանգամանքին:

Ներսէս Նինոյը որպէս շինարար և առաքինի մարդ՝ ակնածելի էր. բայց որպէս յունամոլ՝ ատելի: Սերեոսը նրա մասին գրում է. «Եւ ոչ ումեք ի վեր հանէր զխորհուրդ ամբարշտութեանն, մինչև եհաս յեպիսկոպոսութիւն աշխարհին և անտի կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան: Եւ էր այր առաքինի վարուք, պահօք և աղօթիւք. բայց ի սրտի իւրում ծածկեալ ունէր զթիւնս դառնութեան...» (Եր. 140—141): Զուարթնոց եկեղեցու շինութեան հանգամանքն էլ չէր կարող հայերի սրտով լինել:—Մովսէս Կաղանկատուացին Ներսէսին՝ յունաց Կոստանդին կայսրի հայրագիր կոչելով՝ գրում էր. «Սա էր հայրագիր նորին Կոստանդինի և գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտից ի Քաղաքուգաշտի, ի սուրբ Գրիգորի և ի նաւակատիս կոչեաց զթագաւորն Հռոմոց, որ յաւեժ հիացեալ ընդ շինուածն...» (Հատ. գ. գլ. ԺԵ. եր. 255):

Ահա այս վարկումները Ներսէս Նինոյի անձի և նրա շինած եկեղեցու վերաբերութեամբ կարող էին առաջացնել ազգի մէջ ատելութիւն և աւանդուել որդւոց որդի, որով մի անգամ եկեղեցին այրուելուց ու աւերուելուց յետոյ էլ չը վերաշինուեց ու աւերակ մնաց:

Մեր այսքան մանրամասնութիւնների մէջ մոռնելու պատճառն էր այն, որպէս զի Զուարթնոց եկեղեցու ամբողջ պատմութիւնը պարզեւք հասարակութեան առաջ՝ հասարակութեանը նախապատրաստենք զգուշութեամբ վերաբերուել լրագրների մէջ տպուած յօդուածներին և բերանացի յեղ-յեղուող զրոյցներին:

Լրագրներում և բերանացի զրոյցներում ի միջի այլոց դատաւիտւում են եւ ս. Էջմիածինը, որը որպէս թէ չէ օժանդակել և չէ օժանդակում հ. Խաչիկին՝ Զուարթնոց եկեղեցու պեղման գործում, եւ ս. Էջմիածնի միաբանութիւնը, որը որպէս թէ չըկամութեամբ խոչընդոտն է լինում հ. Խաչիկին՝ պեղումն առաջ տանելու:

Ճշմարտութիւնն այն է, որ հ. Խաչիկը քաջալերութիւն և օժանդակութիւն ստացել և ստանում է ս. Էջմիածնից, Վեհափառ Հայրապետից և ս. Հռիփսիմէի վանքից — զրամով, նիւթով, սերմացու ցօրենով և թխած հացով: Հ. Խաչիկը մինչև հոկտեմբերի վերջը ս. Էջմիածնից բացի իւր միաբանական հացից օրական 56 հաց էլ ստանում էր Զուարթնոց եկեղեցու աւերակներում աշխատողների անունով. նոյեմբերից որոշել է Վեհ. Հայրապետը հացի տեղ երեք խալվար ցօրեան տալ ս. Հռիփսիմէի վանքից. Խաչիկ Հայր-սուրբը Մայր Աթոռումս ունի լաւագոյն բնակարաններից մէկը և ստանում է միաբանների կարգում ռոճիկ: Բացի այս, Զուարթնոց եկեղեցու շուրջը բաւական ընդարձակ տեղի վերայ վար ու ցանք է անում, և հաւաքած ու ստացած նուէրներն ու օժանդակութիւնները յանուն Խանգարած եկեղեցու՝ ըստ կամս տնօրինում:

Ճշմարիտ է և այն՝ որ ինչպէս ս. Էջմիածնի միաբանութիւնը նոյնպէս և ազգի խոհական մասը դժգոհ են Խաչիկ Հայր-սուրբից, նրան համարելով աղբիւրլ բազրական այլանդակ յօգուածների և առասպելական զրոյցների՝ թէ ս. Էջմիածինը չէ ս. Լուսաւորչի տեսլեան տեղը կառուցուած Էջմիածինը, այլ Զուարթնոց եկեղեցին է, որ որպէս թէ լինելով ս. Լուսաւորչի հիմնարկածն ու նրա գերեզմանատեղին կոչւում է ս. Գրիգոր. թէ գտնուել է մինչև հիմքը պեղուած սիւնի տակ ս. Լուսաւորչի մասունքը. թէ ս. Էջմիածնի միաբանութիւնը հաւածում է Հ. Խաչիկին նրա յաջող գործունէութեան նախանձելով և այլն: Մենք այդ տեսակ լուրերը այլանդակ և անհեթեթ առասպելական զրոյցներ համարեցինք, երբ դադար առնեն այդ այլանդակ ու անհեթեթ զրոյցները, կը դադարեն ամեն տեսակ յուզմունքներն էլ. Զուարթնոց եկեղեցին կը մնայ է. դարից մնացած մի գնահատելի հնութիւն, Հ. Խաչիկն էլ

մի բաղմամաստակ աշխատաւոր, արժանի շնորհակալութեան:

Մարդ ի՞նչպէս չը վրդովուի. ճիշտ այն ժամանակ, երբ լրանում է Մայր Կաթուղիկէի հիմնադրութեան 1600 տարին, յանկարծ դուրս են գալիս ասում են, թէ ամբողջ ազգից ընդունուած և պատմութեան անյեղլի փաստերով նուիրագործուած Կաթուղիկէն չէ, Էջմիածինը, այլ Զուարթնոց եկեղեցին: Ե՛կ ու հասկացրու, թէ Զուարթնոց եկեղեցու կառուցման ժամանակ Կաթուղիկէն 340 տարուայ հնութիւն ունէր և չորս անգամ էլ վերանորոգուած էր: Պատմութեան տեղեակ մարդը չի մոլորուի. բայց օտարազգի՞ն, բայց ռամիլը: Ե՛կ ու ռամկին հասկացրո՛ւ, թէ ս. Լուսաւորիչը ինքն իւր անունով եկեղեցի չէր կառուցանի, այլ նրանից յետոյ եղողները կարող են նրա անունով եկեղեցի կառուցանել, եկ ու հասկացրո՛ւ թէ, եթէ ս. Լուսաւորիչ ինքն է կառուցել Զուարթնոց կամ Խանգարած եկեղեցին, ինքն իւր նշխարները ինչպէ՞ս դրեց իւրակառոյց եկեղեցու սների հիմքերի տակ:

Զուարթնոց եկեղեցու աւերակների բացմամբ այնքան այլանդակ առասպելներ և զրոյցներ հրատարակուեցին ու խօսուեցին, որ մարդ չի կարողանում որոշել, թէ որտեղ է վերջանում սուտը և որտեղից է սկսում ճշմարիտը. որով այդ պատուական հնութիւնը կորցրել է իւր իսկական նշանակութիւնը:

* * *

Զուարթնոց եկեղեցու բացմամբ հեռւեալ ծանր խնդիրներն են առաջ գալիս.

Այդ հազարամեայ աւերակ եկեղեցին պէտք է վերաշինել թէ ոչ. և ինչի՞ վերաշինել. ո՞ր տեղից դանել հարիւր հազարներ նախկին ծեւով վերաշինելու համար. այլապէս անխորհուրդ բան կը լինի կոպէկ անգամ ծախսելը: Այժմ, որ դժուարանում ենք շէն վանքերը պահպանել, հազարամեայ հիմն ի վեր կործանուած եկեղեցին պիտի կարողանանք վերաշինել ու պահպանել:

Նոյեմբեր-Դեկտեմբեր

Զուարթնոց եկեղեցու աւերակների վերայ պէտք է շարունակել ծախսեր անելը, մինչև երբ և ինչի՞ համար:

—Ըստ իս, պէտք է Զուարթնոց եկեղեցու աւերակների վերայ խնամք ունենալ. բայց զբաղեցնել մի ձեռնհաս վարդապետի միմիայն աւերակների վերայ հսկող թողնելով՝ բոլորովին աւելորդ է: Շնորհակալ լինելով Հ. Խաչիկից, որ նա երևան հանեց Զուարթնոց եկեղեցու յատակն ու մերձակայ շինութիւնների մնացորդները, պէտք է նրան իւր ընդունակութեան ու եռանդին յարմար մի այլ պաշտօն տալ և չը դատապարտել, որ իւր լաւագոյն ժամանակը Խանգարած եկեղեցու աւերակներում սեւացնի. իսկ Զուարթնոց եկեղեցու աւերակների վերահսկողութիւնը պէտք է յանձնել ս. Հովհ. սիմէի վանքի վանահօրը, պարտաւորեցնելով մի պահապան պահել այնտեղ և հսկել՝ որ հնութիւնները նորից չը ծածկուեն փոշով և աւազով: Իսկ ինչ որ արժէք ունի և կարելի է տեղափոխել՝ պէտք է բերել և ղեակողել Մայր Աթոռի Թանգարանում, չը թողնելով նշաւակ բնութեան ու ժամանակի աւերմունքների և անհարազատ ձեռքերի:

Ամփոփումն.

ա. Զուարթնոց եկեղեցին, ինչպէս աւանդում է Սերեոսը, որ ականատես պատմիչ է, կառուցուած լինելով Ներսէս Գ. Շինողից՝ անմարդաբնակ, անջուր և առապար տեղում, չէր կարող լինել նախաքրիստոնէական հնութիւն՝ Երազմոյն, Երազրնդհան, Երազացոյց Տիւր աստուածների մեհեան, ինչպէս գրւում է լրագրներում և խօսւում բերնէ բերան:

բ. Զուարթնոց եկեղեցին չէ կարող լինել այն տեղը, ուր ս. Լուսաւորիչ, ըստ Ագաթանգեղոսի, քաղաքամիջում, արքունի ապարանքին մօտ յայտնի տեսիլը տեսաւ, որովհետև Զուարթնոց եկեղեցին քաղաքի կենտրոնից չորս վերստ հեռու է:

գ. Զուարթնոց եկեղեցին Մայր եկեղեցի և ս. Լուսաւորչի աթոռ չէ եղել. նրասների տակ չէին կարող թաղուել ս. Լուսաւորչի նշխարները, որովհետև Խանգարած (կամ Զուարթնոց եկեղեցին հիմնարկուել է 640—48 թուին Ներսէս Շինողի ձեռ-

քով, իսկ Լուսաւորչի մարմինը, տեղափոխուել է ըստ Կաղանկատուացու՝ 677 թուից յետոյ, այսինքն եկեղեցու հիմնարկութիւնից մօտ 40 տարի յետոյ, Սահակ Զորափորեցու օրով: Կաղանկատուացու ասածն էլ անպայման ճիշտ է, որովհետեւ նա ասում է որ նշխարները փոխադրուել են «բոլորովին ամենայն ոսկերօքն հանգերձ» Թորգանից, մոռանալով, որ առաջ էլ ասել էր, թէ Վաչտկան թագաւորը Մատթէ երէցից Եղարի վերջին ստացել է ս. Լուսաւորչի նշխարը. բացի այս, ս. Լուսաւորչի մասունքը, որ 450 թուից Վարդանանց պատերազմի ժամանակից արդէն հայրապետանոցի յայտնի սրբութիւնների կարգումն էր՝ մօտ 250 տարի առաջ կար ու յայտնի էր:

դ. Հ. Խաչիկը ոչ թէ մի անյայտացած աւերակ է գտել, այլ մի շատ յայտնի և գեանի երեսից երկու սաժենաչափ բարձրութեամբ բեկորներ ունեցող աւերակների մէջ պեղումներ միայն կատարելով՝ բացել է այդ աւերակի յատակը, որի համար և շնորհակալութիւն իրան:

Յօսիկ Եպիսկոպոս



ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՂՆԵՐԸ

Անոնք որ հրապարակային պաշտօններու կը նուիրուին և ուղղակի կամ անուղղակի կերպերով կը ծառայեն Ժողովուրդին, անտարակոյս, ոչ միայն մեծ գործ մը կատարած կըլլան, այլ նաև գործ մը, որ ամենամեծ պատասխանատուութիւն մը ունի: Եւ հարկաւ՝ այդ պատասխանատուութիւնը աստիճան մը ունի իւրաքանչիւր առաջնորդողի համար: Հայոց մէջ առաջնորդողներու աստիճանները շատ կնճռոտ չեն, բայց կարևոր են: Այսօր հայերը երեք որոշ դասակարգեր ունին առաջնորդողներու. հայ ուսուցչութիւնը, հայ եկեղեցականութիւնը և հայ